<<ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 30 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-ի

<u>ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ</u>

<u>2023-2028</u>

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն
2.Ընդհանուր դրույթներ
3.Դպրոցի առաքելությունը
3.1 Առաքելության նպատակը
3.2Առաքելությունից ակնկալվող արդյունքները
4.Դպրոցի բնութագիրը/անձնագիրը
5 Իրավիճակի վերլուծություն
6. Զարգացման հիմնական նպատակները ըստ ոլորտների
6.1. Դպրոցի գործունեությունը կանոնակարգ իրավական ակտերը
(դպրոցի կանոնադրություն, տեղայնացված օրինակելի
իրավական ակտեր, ներքին իրավական ակտեր), դրանց վարումը (նորմատիվ փաստաթղթեր)
6.2. Կառավարման և խորհրդակցական մարմինները
6.2.1 Մանկավարժական խորհուրդ
6.2.2 Ծնողական խորհուրդ
6.2.3 Աշակերտական խորհուրդ
6.2.4 Շրջանավարտների և հոգաբարձուների խորհուրդ
6.3 Համագործակցություն
6.4 Աշակերտական համակազմ
6.5 Մանկավարժական համակազմ
6.6 Ուսումնական միջավայրը
6.7 Ներառական կրթություն
6.8 Կրթության որակը
6.9 Նորարարություն և տեխնոլոգիաներ
7. Դպրոցի զարգացման նախընտրելի ուղղությունները
7.1 Սովորողների կարողունակությունների և հմտությունների զարգացումը
7.2 Դպրոցի դաստիարակչական համակարգի կատարելագործումը
7.3 Հայրենասիրական դաստիարակություն
7.4 Բազմակարծիք, ներառական, մասնակցային արժեքային համակարգ
7.5 Հալածանքի,օտարման և բռնության կանխարգելման միջոցների կիրառում
7.6 Աշխատակազմին արժևորելու, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ձևավորում
7.7. Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծություն, դրանց արդյունավետության ցուցանիշների
շեղումների և պլանավորման խնդիրների տեսանկյունից
8. Դպրոցի զարգացման ծրագրի պլանավորման և իրականացման ռիսկեր, մեղամացնող կամ չեզոքցնող գործողություններ
9.Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման անհրաժեշտ միջոցները,նյութատեխնիկական պարագաները և մարդկային,բյուջետային, տեխնոլոգիական ռեսուրսները
10. Դպրոցի հիմնախնդիրների լուծման ուղիները, պատասխանատուներն ու կատարման ժամանակացույցը
11. ԴԶԾ գնահատման չափանիշները, վերահսկողությունը և վերահսկողության արդյունավետ միջոցառումներԸ
11.1 ԴԶԾ կատարման ամենամյա հաշվետվություն

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք:
/ ՀՀ Սահմանադրություն, հոդված 39/

Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու և սերունդներին փոխանցելու համար:

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որը ՀՀ կառավարության ներկայացմամբ հաստատում է ՀՀ Ազգային ժողովը:

ՀՀ անկախության հռչակումից հետո սկսվել են իրականացվել կրթության ոլորտի բարեփոխումներ, որոնք հնարավորություն են տվել լուծելու համակարգում առկա շատ խնդիրներ, կայունացնելու իրավիճակը և նախադրյալներ ստեղծելու զարգացման համար:

«Գյումրու թիվ 30 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման 2023-2028 թթ. ծրագիրը մշակվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ-ի սեպտեմբերի 30-ի N 35-Ն հրամանի՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջներով ու ձևաչափով՝ հաշվի առնելով մանկավարժական կոլեկտիվի ձեռքբերումները և դպրոցում առկա հիմնախնդիրները:

2.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

«Գյումրու թիվ 30 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման 2023-2028 թթ. ծրագիրը մշակվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ-ի սեպտեմբերի 30-ի N 35-Ն հրամանի՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջներով ու ձևաչափով՝ հաշվի առնելով մանկավարժական կոլեկտիվի ձեռքբերումները և դպրոցում առկա հիմնախնդիրները, ինչպես նաև հաստատության մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների առաջարկությունները։

«Գյումրու թիվ 30 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման ծրագիրը կազմվել է հանրակրթության ոլորտը կանոնակարգող հետևյալ նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխան.

- ՀՀ Սահմանադրություն
- «Կրթության մասին» ՀՀ օրենք
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
- «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենք
- «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք
- «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք
- ՀՀ Կառավարության սահմանած «Հանրակրթության պետական չափորոշիչ»
- ՀՀ կրթության զարգացման մինչև 2030թ. պետական ծրագիր։

«Գյումրու թիվ 30 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի սովորողների համար ստեղծվելու են բոլոր հնարավորությունները՝ իրականացնելու ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածով երաշխավորված կրթության իրենց իրավունքը։

3.ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Առաքելությունը կազմակերպության ցանկալի ապագայի մտապատկերն է:

Վաղվա օրը ձևավորվում է այսօր. առողջ սերունդ քաղաքացիական առողջ հասարակության համար:

Այս առաքելության իրականացման ճանապարհին կարևորում ենք կրթական գործընթացում ժամանակավրեպ չլինելը: «Արագությունների», «տեղեկատվության», «ինտեգրման» անվանված քսանմեկերորդ դարը պահանջում է արմատական փոփոխություններ կրթական ոլորտում: Փոփոխությունների համակարգված իրականացման համար որպես ելակետ ենք ընդունում զարգացման սույն ծրագիրը, որը ենթադրում է աստիճանական իրականացում:

- Կրթական բոլոր աստիճաններում ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթություն ստանալու հավասար իրավունքը:
- ապահովել սովորողների կրթական կարիքներին, հակումներին, ընդունակություններին,կարողունակություններին և նախասիրություններին համապատասխան նախնական միջին, իսկ այնուհետև բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու հնարավորություն
- Ապահովել պետության կրթական քաղաքականության միտումներին,համայնքի շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին համապատասխանող ուսումնառություն
- Ստեղծել բարենպաստ պայմաններ՝ օժտված երեխաների տարբերակված, ծորացված ուսումնառություն կազմակերպելու համար
- Ապահովել ԿԱՊԿՈՒ սովորողների կրթություն ստանալու հավասար իրավունքը

3.1 ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

- «Գյումրու թիվ 30 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի առաքելության նպատակն է իր սովորողներին ազգային հենքի վրա որակյալ կրթություն տալն է՝ ապահովելով համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված քաղաքացիների ձևավորումը, որոնք կարող են իրենց կրթությունը շարունակել նախնական մասնագիտական (արհեստագործական), միջնակարգ–մասնագիտական և այլ ուսումնական հաստատություններում
- բարձրացնել կրթության որակը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը
- դպրոցում ձևավորել ուսումնական, սոցիալ-հոգեբանական, ստեղծագործ, առողջ միջավայր, որպեսզի յուրաքանչյուր սովորող կարողանա դրսևորել իր կարողունակություններն առավելագույնս
- հիմնական դպրոցն ավարտելուց հետո հստակ կողմնորոշվի թե որ ուսումնական հաստատությունում է շարունակելու կրթությունը(ավագ դպրոց, վարժարան, մասնագիտական քոլեջ, երաժշտական քոլեջ,արհեստագործական ուսումնարան և այլն)
- գիտակցի ի՞նչ է սեփական արժանապատվությունը և հարգի յուրաքանչյուրի ազատ արտահայտվելու կամքը

ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ՝

- կենտրոնացնել առկա մարդկային և նյութական ռեսուրսները, առավել արդյունավետ տնօրինել դրանք
- աշակերտների ընդունելության ժամանակ առաջնային նախապատվությունը տալ թաղամասի բնակիչներին
- դպրոցի ծնողական և աշակերտական խորհուրդների հետ համագործակցության բարելավում
- Կարևորել լեզուների ուսուցումը՝ ժամանակի մարտահրավերներին դիմակայելու համար

3.2 ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԵՆ՝

- դպրոցում ունենալ ապահով,ջերմ միջավայր
- ունենալ անսպառ գիտելիքներով օժտված,հոգատար,հանդուրժող ուսուցիչներ ու մանկավարժական աշխատողներ
- SS կիրառումը դարձնել ամենօրյա կրթության մաս
- ձևավորել քննադատական մտածողությամբ և վերլուծող անհատ
- ունենալ մրցունակ և օրինակելի դպրոց

Սպասվելիք արդյունքների ապահովման գործընթացում խիստ կարևոր կլինի բարձր մասնագիտական և մարդկային որակներով օժտված մանկավարժական կադրերի ձևավորումն ու նրանց աշխատանքը խրախուսելու,խթանելու ընթացքը:

4.ԲՆՈՒԹԱԳԻՐԸ/ԱՆՁՆԱԳԻՐԸ/

ՀՀ իրավաբանական անձանց պետռեգիստրի տարածքային բաժնում գրանցվել է 03.02.2003թ.-ին, իսկ 09.09.2013թ-ին վերագրանցվել է: Դպրոցի կանոնադրությունը նոր խմբագրմամբ հաստատվել է 09.09.2013թ.-ին:

Դպրոցի գտնվելու վայրն է՝ ՀՀ Շիրակի մարզ,ք. Գյումրի,Շչեդրինի 7

Լիցենզիաներ՝ տարրական՝ Սերիա Ա N 0562

հիմնական՝ Սերիա Ա N 0551

Տարրական ընդհանուր՝1-ին աստիճան՝110սահմանային տեղ:

Հիմնական ընդհանուր՝2-րդ աստիճան՝150 սահմանային տեղ:

Դպրոցն իրականացնում է հիմնական կրթություն, որը հանդիսանում է պարտադիր կրթության երկրորդ մակարդակը և ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի առաջին և երկրորդ աստիճանները:

Դպրոցի ստեղծման տարեթիվը՝

1963թ, որպես ռուսաց լեզվի խորացված ուսուցմամբ հիմնական դպրոց

Տվյալ շենքում դպրոցի տեղակայման տարեթիվը՝ 2000թ.

Դպրոցն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ: Դպրոցը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների հետ: Դպրոցում արգելվում է իրականացնել քաղաքական գործունեություն կամ քարոզչություն : Կրոնական գործունեությունը և քարոզչությունն արգելվում են՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Դպրոցն աշխատում է 5-օրյա աշխատանքային շաբաթով:

5 ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար նախ անհրաժեշտ է վերլուծել առկա իրավիճակը, բացահայտել ուժեղ և թույլ կողմերը, վերհանել առկա հիմնախնդիրները:

Վերլուծությունը համակարգված իրականացնելու համար նպատակահարմար է այն կատարել ըստ որոշակի ոլորտների՝ առավելագույնս ընդգծելով դպրոցի ուժեղ և թույլ կողմերը:

Դպրոցի շենքի տիպը՝տիպային է՝2 հարկանի,նախագծային հզորությունը՝260 աշակերտ:

Ջեռուցման եղանակը՝ լոկալ ջեռուցման ցանց

Առանձնասենյակների թիվը՝ 3

Դասասենյակների թիվը՝ 14

Լաբորատորիա՝ 2

Առարկայական սենյակ /կաբինետ՝ 8

Նախնական զինպատրաստության՝ 1

Համակարգչային կաբինետ՝ 1

Ինտերնետ կապի առկայությունը՝ առկա է

Բացօթյա սպորտհրապարակ՝ 1

Մարզադահլիճ՝ 1

Գրադարանի ֆոնդը՝ 372 կտոր գեղարվեստական գիրք

Աշխատողների թիվը՝ 38

Դասարանների թիվը՝ 9

Աշակերտների թիվը՝ 170

Դպրոցում կա ձևավորված 3 առարկայական մասնախումբ՝1.հումանիտար

2. Բնագիտամաթեմատիկական

3. Տարրական կրթության

Ուսուցիչների տարիքային բաշխվածությունը

	25-29տ.	30-39տ.	40-49տ.	50-59տ.	60տ. և ավելի	ընդամենը
2018-2019	-----	1	2	2	8	13
2019-2020	2	4	1	2	6	15
2020-2021	3	4	2	4	5	18
2021-2022	2	4	1	3	7	17
2022-2023	----	6	2	2	8	18

Վարչական աշխատողների քանակը

2018-2019	2019-2020	2020-2021	2021-2022	2022-2023
3	2	2	2	2



ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
• Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը (դպրոցի կանոնադրություն, տեղայնացված օրինակելի իրավական ակտեր, ներքին իրավական ակտեր), դրանց վարումը, • Կառավարման և խորհրդակցական մարմինները, • Աշակերտական համակազմը, • Մանկավարժական համակազմը, • Համագործակցությունը կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ, • Ուսումնական միջավայրը, • Կրթության որակը՝ ըստ սովորողների ուսումնառության արդյունքների: • Դպրոցն ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմամբ: • Դպրոցի շենքն ունի պահուստային ելքեր: • Բոլոր աշակերտներն ապահովված են դասագրքերով,գրադարանում առկա են քարտեզներ, ատլասներ,բառարաններ • Մեկ սանհանգույց հարմարեցված է ԿԱՊԿՈՒ սովորողների համար	• Դպրոցի նյութատեխնիկական բազան, • Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը, • Ձեռնարկատիրական գործունեության բացակայությունը, • Համագործակցությունը համայնքի հետ, • Մանկավարժական համակազմում որակավորման տարակարգ ունեցողների պակասը, • Նորամուծությունների նկատմամբ մանկավարժների հետաքրքրության պակասը, • ՏՀՏ-ների ներդրման և օգտագործման մակարդակը: • Ինը սանհանգույցներից աշխատում են հինգը • Դպրոցը չունի հանդիսությունների դահլիճ • Լաբորատորիաները գրեթե գույք չունեն,եղածն էլ ֆիզիկապես մաշված է

Հաստիքային ցուցակ
2022-2023 ուսումնական տարվա

Հաստիքի անվանում	Հաստիքային միավորի քանակը
Վարչական անձնակազմ	
Տնօրեն	1.0
Տնօրենի տեղակալ ուսումնական գծով	1.0
Հաշվապահ	1.0
Տնտեսվար	1.0
Ընդամենը	4.0
Ուսումնաօժանդակ անձնակազմ	
Զինղեկ	1.0
Քաղպաշտպանություն	0.25
Օպերատոր	1.0
Գրադարանավար	1.0
Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ	1.0
Հոգեբան	1.0
Սոց.մանկավարժ	1.0
Ուսուցչի օգնական	1.5
Ընդամենը	7.75
Հավաքարար	3.0
Գիշերապահ	1.5
Հնոցապան	3.0
Խոհարար	0.5
Գործավար	1.0
Ընդամենը	9.0
ԸՆԴԱՄԵՆԸ	20.75

Միջին դրույքաչափը՝ 114 158 դրամ
Փաստացի ուսուցիչների թիվը՝ 18
Ուսուցիչների դրույքի թիվը՝ 12.1

N	Օբյեկտի անվանումը և համառոտ բնութագիրը	Թողարկման (կառուցման) տարեթիվը	**Քանակը**
1	Դպրոցական շենք	2000	1
2	Մարզական և հանդիսությունների դահլիճ	2007	1
3	Հեռուստացույց	1995	1
4	Հեռուստացույց	2007	1
5	Նվագարկիչ DVD	2002	1
6	Դաշնամուր <<Սևան>>	2002	1
7	Կարի մեքենա <<Չայկա142>>	1982	1
8	Կարի մեքենա <<Պադոլսկ>>	1982	1
9	Երաժշտական կենտրոն	2007	1
10	Էլեկտրական սալիկ ջեռոց	2007	1
11	Սառնարան	2007	1
12	Սեղան սառեցումով	2007	1
13	Միկրոալիքային վառարան	2007	1
14	Էլեկտրական ջրատաքացուցիչ	2007	3
15	Ներժավե սեղան 1200*600	2018	1
16	Ներժավե սեղան 1200*500	2018	2
17	Ջրատաքացուցիչ 30 լիտր տարողությամբ	2018	1

18	Սառնարան 250-300լ տարողությամբ	2018	1
19	Էլեկտրական կշեռք	2018	1
20	Ջրի դիսպանսեր	2018	1
21	Սառնարան վիտրինա	2018	1
22	Աշակերտական նստ.(մոխրագույն)		60
23	Գրասեղան (Կարիտաս)	2001	2
24	Գրատախտակ (Կարիտաս)	2001	13
25	Գրասեղան ՝ տնօրենի	2001	1
26	Ուսուցչի սեղան	2001	8
27	Գրապահարան	2001	10
28	Աշակ. Սեղան-նստարան	2001	53
29	Աշակերտական սեղան	2001	10
30	Ուսուցչի սեղան	2001	1
31	Ուսուցչի գրասեղան	2001	5
32	Ուսուցչի պահարան	2007	3 զույգ
33	Համակցված պահարան	2007	2 զույգ
34	Ամանների լբացարան	2007	1
35	Բուֆետի վաճառասեղան	2007	1
36	Մարզանստարան	2007	2
37	Մարզապատ	2007	4
38	Բասկետբոլի վահան	2007	2
39	Բժշկական թախտ	2007	1

40	Ձեռքի գնդակի դարպաս	2007	2
41	4-տեղանի ճաշասեղան- աթոռ	2007	9 կոմպլեկտ
42	Պահարան	2007	2
43	Ուսուցչի սեղան	2007	2
44	Գորգ (3x4)	2007	24 քմ
45	Գորգ (2x3)	2007	24 քմ
46	Գորգ (3x5)	2007	15 քմ
47	Պահարան	2001	3
48	Ուսուցչի սեղան	2001	2
49	Ուսուցչի աթոռ	2001	2
50	Բազկաթոռ	2001	5
51	Սայլակ	2001	1
52	Ժամացույց	2001	3
53	Սեղան աշակերտական (21տեղ.)	2001	52
54	Սեղան աշակերտական (2 տեղ.)	2001	8
55	Աթոռներ տարբեր տեսակի	2001	35
56	Գրասեղան	2001	2
57	Պահարան	2001	3
58	Գրասեղան	2001	8
59	Էլեկտրական ջրատաքացուցիչ	2001	1
60	Շախմատ	2013	4
61	Պաստառ ՆԶՊ	2001	1 կոմպ.
62	Ալեհավաք	2001	1

63	Աթոռ (Կարիտաս)	2001	12
64	Կրակմարիչ	2001	4
65	Համակարգչայի սեղան	2005	6
66	Տումբա՝ տնօրենի	2013	1
67	Աշակերտական աթոռ	2001	20
68	Կափարիչով աղբաման	2001	2
69	Կախիչ	2001	2
70	Աշակերտական սեղան	2001	10
71	Աշակերտական աթոռ	2001	20
72	Կլոր սեղան	2001	2
73	Գրատախտակ	2001	10
74	Երկկողմանի կախիչ	2001	2
75	Արտադրական սեղան	2001	1
76	Արտադրական դարակաշար	2001	1
77	Դահլիճի աթոռ	2007	136
78	Կիսափափուկ աթոռ	2007	12
79	Մարզաճոպան	2007	2
80	Նստարան զգեստ փոխելու	2007	8
81	Մարզագույքի դարակաշար	2007	2
82	Միակողմանի պատի կախիչ	2007	4
83	Բահ	2001	4
84	Քլունգ	2001	1
85	Մանկական սպորտային ժիլետ	2001	8

86	Ձագար	2001	10
87	Կոն	2001	5
88	Օղակ	2001	5
89	Ձող	2001	2
90	Կրակմարիչ	2001	2
91	Շախմատի սեղան-աթոռ	2013	12
92	Շերտավարագույր	2015	45 քմ
93	Տոնածառ	2015	1
94	Համակարգիչ CPU5700	2012	1
95	Ուսուցչական սեղան	2009	2
96	Սեղան՝ խաղային,կլոր	2008	2
97	Սեղան ուսուցչի	2008	3
98	Սեղան աշակերտի	2008	10
99	Աթոռ աշակերտի	2008	20
100	Պահարան	2009	4
101	Ուսուցչական աթոռ	2008	3
102	Ուսուցչական աթոռ	2009	2
103	Տարրական դաս. Աշխ. գույք	2011	12
104	Փոշեկուլ Panasonik	2016	1
105	Աթոռ	2017	6
106	Համակարգիչ	2012	1
107	Բազմաֆունկցիոնալ տպիչ	2012	1
108	Հոսանքի անխափան սնուցման սարք (UPS)	2012	1

109	Համակարգիչ	2012	2
110	Համակարգիչ (PEN4 Ա խումբ)	2012	4
111	Համակարգիչ (PEN4 Բ խումբ)	2012	1
112	Սկաներ	2012	1
113	Ինտերակտիվ պրոեկտոր optomaw319USTire Տեխնոլոգիան-DLP տեսակը	2019	1
114	Լազերային տպիչ	2012	1
115	Հաբ 16	2012	1
116	Համակարգիչ (PEN4)	2010	1
117	Մինի համակարգչային հավաքածու	2019	5
118	Համակարգչի հավաքածու եռաչափ տպիչի համար	2019	1
119	Համակարգչի հավաքածու շաղափային և լազերային հաստոցի	2019	1
120	Համակարգչային սեղան 1	2019	1
121	Համակարգչային սեղան 2	2019	1
122	Համակարգչային սեղան 3	2019	6
123	Համակարգչային աթոռ	2019	16
124	Եռաչափ տպիչ Բզեզ 2.0	2019	1
125	Փոշեկուլ GORENJE VC1411	2019	1
126	Ռոբոտ կոնստրուկտորի հիմնական հավաքածու	2019	1
127	Նորացման և գործիքների լրացուցիչ հավաքածու	2019	1
128	Ռոբոտի տեխնիկական էլեկտրոնային հանգույցների լրացուցիչ հավաքածու	2019	1
129	Ավտոմատացման և էլեկտրոնիկայի ընդլայնման հավաքածու	2019	1
130	Թվային կառավարման շաղափային և լազերային հաստոց	2019	1
131	Համակարգիչ	2022	1

132	Ստեղնաշար	2022	1
133	Գեղարվեստական գրքեր	2000	215
134	Ռուս-հայ ռազմ. բառարան	2000	1
135	Արևելյան սիրավեպեր	2000	1
136	Մարդու կմախք	2001	1
137	Մանրադիտակ	2001	2
138	Լույսի անդրադարձման և բեկման օրենք զուգորդող սարք	2001	1
139	Էլեկտրաստատիկ սարք	2000	1
140	Էլեկտրական հոսանք ցուցադրող սարք	2000	1
141	Էլեկտրաստատիկայի օրենք ցուցադրող սարք	2000	1
142	Օպտիկայի օրենք ցուցադրող սարք	2000	1
143	Վակումային պոմպ	2000	1
144	Լույսի սպեկտոր ցուցադրող սարք	2000	1
145	Դեֆորմացիան բացատրող սարք	2000	1
146	Էլեկտրական հոսանք կարգավորող սարք	2000	1
147	Պարբերական համակարգ	2000	1
148	Սրվակներ	2000	10
149	Մոլեկուլ կառուցելու մոդել	2000	4 տուփ
150	Չափագլան	2000	1
151	Ապակե ձագար	2000	1
152	Զտիչ ձագար	2000	1
153	Նյութերի պահպանման անոթ	2000	2
154	Չափանոթ	2000	1

	2019 թ.	2020 թ.	2021 թ.	2022 թ.	2023 թ.(8 ամիս)
Տարեկան ֆինանսավորում	50996,7	47166,1	48925,0	48211,6	36051,7
Տարեկան աշխատավարձի ֆոնդ	43661,3	42942,3	41937,4	42712,6	29151,0
Տարեկան կոմունալ և այլ ծախսեր	6955,6	4122,2	4104,7	5063,5	4446,0
Անապահով սովորողների գրքերի վարձավճարների փոխհատուցվող գումար	64,0	60,0	64,0	60,0	-------
Ուսուցչի միջին ամսական աշխատավարձ	114,158	114,158	114,158	114,158	114,158
Սպասարկող անձնակազմի միջին աշխատավարձը	89103	89103	89103	89103	95600
Սովորող ուսուցիչ հարաբերակցություն	1/10	1/10	1/10	1/10	1/10
Դասարանների միջին խտություն	20	20	20	19	19

6. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ



6.1.Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը (դպրոցի կանոնադրություն, տեղայնացված օրինակելի իրավական ակտեր, ներքին իրավական ակտեր), դրանց վարումը (նորմատիվ փաստաթղթեր)

Ուսումական հաստատությունում պետք է առկա լինեն պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերը, և դրանք պետք է վարվեն կարգերի պահանջներին համապատասխան: Ուսումական հաստատությունը պետք է արդյունավետ օգտագործի գոյություն ունեցող նորմատիվ փաստաթղթերը, դրանց օրինակելի ձևերը, իր իրավասության սահմաններում մշակի հաստատության համար անհրաժեշտ նոր նորմատիվ փաստաթղթեր (ներքին իրավական ակտեր) և դրանք կիրառի աշխատանքի ընթացքում: Այս աշխատանքին մասնակցելու հնարավորություն պետք է ունենան հաստատության բոլոր աշխատակիցները: Այդ փաստաթղթերը պետք է լինեն արդյունավետ, ժամանակակից, իրականանալի, ապահովեն աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների աճ:

Այս ցանկում նշված փաստաթղթերի լրացման կարգը սահմանվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից: Դպրոցը չի կարող դրանք փոփոխել և պետք է ճշտությամբ կատարի դրանց պահանջները:

Այսպիսով՝ դպրոցի տնօրենը պետք է վստահ լինի, որ ցանկում թվարկված փաստաթղթերի լրացման կարգերը առկա են, և փաստաթղթերը լրացվում են այդ կարգերի հիման վրա:

Ուստի ***նպատակ*** ենք սահմանում ապահովել ԿԳՄՍ նախարարի կողմից 08.09.2020թ.հաստատված պարտադիր գործածության օրինակելի փաստաթղթերի համապատասխանությունը դպրոցի կառուցվածքային առանձնահատկություններին:

ՑԱՆԿ
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԾՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Էլեկտրոնային դասամատյաններ
2. Աշխատողի անձնական էլեկտրոնային գործ
3. Սովորողի անձնական էլեկտրոնային գործ
4. Միջնակարգ կրթության ատեստատների բաշխման մատյան
5. Հիմնական կրթության վկայականների բաշխման մատյան
6. Ավարտական, պետական ավարտական, փոխադրական, էքստեռն քննությունների և գիտելիքների ստուգման արձանագրություններ
7. Էլեկտրոնային հաստիքացուցակ
8. Տարիֆիկացիոն մատյան, ոչ պետական ուսումնական հաստատությունների դեպքում՝ հիմնադրի որոշմամբ
9. Ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի նիստի արձանագրություն.
10. Ուսուցիչների բաց թողած և փոխարինված դասաժամերի հաշվառման մատյան
11. Ուսումնական առարկաների թեմատիկ պլաններ՝ էլեկտրոնային տարբերակով
12. Դասալսումների արդյունքների արձանագրություն
13. Ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան, տնօրենի տեղակալների, առարկայական մեթոդական միավորումների ղեկավարների, դասղեկների աշխատանքային պլաններ՝ էլեկտրոնային տարբերակով
14. Սովորողների շարժի մատյան

6.2. Կառավարման և խորհրդակցական մարմինները

1. Պետական ուսումնական հաստատության կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և պետական ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով:

2. Պետական ուսումնական հաստատությունն ունի կոլեգիալ կառավարման մարմին՝ խորհուրդ : Օրենսդրությամբ սահմանված կարգով մի քանի հաստատության համար կարող է ձևավորվել նաև միասնական խորհուրդ:

3. Պետական ուսումնական հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ուսումնական հաստատության գործադիր մարմինը՝ տնօրենը և վարչատնտեսական մասի համակարգողը , որոնք նշանակվում, ազատվում, և նրանց լիազորությունները դադարում են օրենսդրությամբ սահմանված կարգով և տվյալ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված դեպքերում:

4. Պետական ուսումնական հաստատությունում վարչատնտեսական գործընթացի կառավարումն իրականացնում է ուսումնական հաստատության համակարգողը կամ լիազոր մարմնի պատվիրակած իրավաբանական անձը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Պետական ուսումնական հաստատությունում ուսումնադաստիարակչական գործընթացի համակարգումն ու մեթոդական ղեկավարումն իրականացնում է տնօրենը:

6. Պետական ուսումնական հաստատության կառավարման մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով, այլ իրավական ակտերով և պետական ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

7. Պետական ուսումնական հաստատության կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդներ, առարկայական մեթոդական միավորումներ, որոնց ձևավորման կարգը և իրավասությունները սահմանվում են ուսումնական հաստատության կանոնադրությամբ: Մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդները Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած կարգով կարող են ներգրավվել տվյալ պետական ուսումնական հաստատության տնօրենի նշանակման գործընթացում: Պետական ուսումնական հաստատության կանոնադրությամբ կարող են նախատեսվել նաև այլ խորհրդակցական մարմիններ՝ հոգաբարձուների և այլ խորհուրդներ:

1. Պետական ուսումնական հաստատության խորհուրդը՝

1) աջակցում է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարմանը, վերահսկում է զարգացման ծրագրի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների իրականացումը, լսում է զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը և տալիս եզրակացություն.

2) հաստատում է դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները.

3) քննարկում է ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները.

4) քննարկում է ներքին և արտաքին գնահատման արդյունքները.

5) լիազորված մարմին է ներկայացնում առաջարկություններ՝ ուսումնական հաստատության գործունեության բնագավառին, նպատակներին և խնդիրներին համապատասխան.

6) հաստատում է իր աշխատակարգը, նիստերի օրակարգը, ժամանակացույցը և ընտրում խորհրդի նախագահ.

7) սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն տրված եզրակացության հիման վրա խորհրդի անդամների (մանկավարժական և ծնողական խորհուրդների դեպքում՝ միայն տվյալ հաստատության մանկավարժական և ծնողական խորհուրդների առաջադրած անդամների) ընդհանուր թվի երկու երրորդի համաձայնությամբ, հիմք ընդունելով լիազոր մարմնի սահմանած կատարողական ցուցանիշներն ու պահանջները, կարող է անվստահություն հայտնել տնօրենին և նրա լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին հիմնավոր առաջարկությամբ դիմել համապատասխան լիազոր մարմնի ղեկավարին.

8) իրականացնում է օրենքով, հիմնադրի կողմից իրեն վերապահված կամ դպրոցի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:


ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ
Մանկավարժական խորհուրդ
Ծնողական խորհուրդ
Աշակերտական խորհուրդ
Շրջանավարտների և հոգաբարձուների խորհուրդ


Մանկավարժական խորհրդի նիստերը պետք է գումարել սահմանված ժամկետներում և լիազորությունները գործնականում դարձնել կիրառելի
Ծնողներին ներգրավել դպրոցի ուսումնադաստի արակչական տարեկան պլանը կազմելու մեջ
ՆՊԱՏԱԿ՝ Կառավարման և խորհրդակցական մարմինների սահուն և արդյունավետ համագործակցություն
Զևավորել շրջանավարտների և հոգաբարձուների խորհուրդ
Զարգացնել աշակերտական ինքնակառավարումը

6.2.1 ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Մանկավարժական խորհուրդը ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, <<Կրթության մասին>>, <<Հանրակրթության մասին>>, <<ՊՈԱԿ-ների մասին>> ՀՀ օրենքներով, դպրոցի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով: Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում, ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուստարի ժամկետով: Դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողները մանկավարժական խորհրդի անդամներ են:

ՆՊԱՏԱԿ՝

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

ԽՆԴԻՐՆԵՐ՝

- Զարգացնել ուսուցիչների դասավանդման ժամանակակից մեթոդների և նորարարությունների կիրառման կարողությունները
- Ուսուցիչների մեջ ձևավորել ուսուցանող գնահատման իրականացման բավարար հմտություններ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՆԿԽՈՐՀԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ

- Մանկավարժների ուժերով մշակել ուսուցանող գնահատման գործիքներ (հարցաթերթեր, առաջադրանքներ, թեստեր)
- Կազմակերպել խորհրդակցական սեմինար դպրոցում գործող 3 մեթոդ միավորումների նախագահների և ուսուցիչների հետ
- իրականացնել ուսուցանող գնահատման արդյունավետության բարձրացման աշխատանքներ
- ներդնել բազմակարծության և մասնակցային գործիքներ մանկավարժների դիրքորոշումները ներկայացնելու ուսուցման, դաստիարակության և կառավարման ոլորտներում
- իրականացնել դպրոցի կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթները (քննարկումներ,որոշումների ընդունում):
- Իրականացնել կրթության նորարարական նվաճումների և առաջավոր փորձի ներդրում մանկավարժական պրակտիկայում,ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի,արտադպրոցական և արտադասարանական խմբակների և ուսումնական կաբինետների ձևավորման,մասնագիտական կողմնորոշման կենտրոնների ստեղծման գործընթացները,առաջարկներ ներկայացնել դպրոցի ղեկավարությանը կրթական աշխատանքների որակի բարելավման նպատակով:
- քննարկել բազմաբնույթ հարցեր,ուսումնադաստիարակչական գործընթացի բարելավման, դպրոցի զարգացման ծրագրի իրագործման հետ կապված խնդիրներ,անդրադառնալ ընթացիկ հարցերին և պատասխանատվություն կրել ընդունված որոշումների համար:
- Ներդնել սովորողների գիտելիքների ստուգման և գնահատման համակարգի առավել արդյունավետ աշխատանք

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ՝

Ունենալիր լիազորությունները հստակ գիտակցող և իրականացնող մանկավարժական խորհուրդ, որը հետևողական կլինի ընդունված որոշումները ճշգրիտ կատարման հարցում:

6.2.2 Ծնողական խորհուրդ

Դպրոցի ծնողական խորհուրդը կազմավորվում է դասարանական ծնողական խորհուրդների նախագահներից, մեկ ուսումնական տարվա համար ՝ դպրոցի կանոնադրությամբ սահմանված կարգով: Կազմվում է աշխատանքային պլան և ծնողական խորհրդի գործունեությունները, ընտրություններն արձանագրվում են ծնողական խորհրդի արձանագրությունների մատյանում: Սովորողների կրթության կազմակերպման և դաստիարակության գործում շատ կարևոր է ծնողական խորհրդի դերը:

ՆՊԱՏԱԿ՝

ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԴՊՐՈՑԻ ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՈՒ ԲԱԶՄԱՇԵՐՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԽՆԴԻՐՆԵՐ՝

- ծնողների իրազեկվածության պակաս
- ծառացած խնդիրների լուծման առաջարկների պակաս
- ծնողների պասիվությունը ուսուցման և դաստիարակության հարցում
- ծնողական համայնքի կողմից ներդրումների պակաս

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ

- ծնողներին ներգրավվել դպրոցի վճարովի ծառայությունների կազմակերպման, արտաբյուջետային միջոցների տնօրինման աշխատանքներին, ուսումնանյութական բազայի հարստացմանը,
- ներգրավվել երեխաների արտադպրոցական ու արտադասարանական աշխատանքներում

ապահովել ծնողներին անհրաժեշտ տեղեկատվությամբ , կազմակերպել հանդիպումներ, միասին գտնելու խնդիրների լուծման ուղիներ,գործել բաց, թափանցիկ

- ծնողական խորհրդի նիստում հանդես գալ առաջարկություններով, լինել նախաձեռնող , պահանջատեր և հետևողական
- Կազմակերպել սեմինարներ ծնողներին իրազեկ դարձնելով հանրակրթության ոլորտում իրականացվող փոփոխություններին

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ՝

Ծնողական խորհուրդն անմիջական մասնակցություն է ունենում դպրոցի առաջաբնթացի գործում, կարողանում է իրականացնել իր օրենքով սահմանված լիազորությունները:

6.2.3 ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դպրոցի աշակերտական խորհուրդը՝ սովորողների ինքնավարության գործադիր մարմինը ,որը գործում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան,ձևավորվում է դպրոցի 6-9-րդ դասարանների ներկայացուցիչներից:Ընդգրկվում են բարձր առաջադիմություն,լավ վարք և հետաքրքիր նախաձեռնություններով հանդես եկող աշակերտները: Դպրոցի աշակերտական խորհուրդն իր գործունեությունը կառուցում է փոխադարձ հարգանքի,սովորողների,ծնողների և տնօրինության փոխադարձ վստահության ու աջակցության մթնոլորտում,իրականացնում է հանրօգուտ աշխատանք

ՆՊԱՏԱԿ՝

Աշակերտական խորհուրդը որպես նախաձեռնող և ինքնավար մարմին, որն ուղղակիորեն մասնակից է կրթության զարգացման, ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործընթացին

ԽՆԴԻՐՆԵՐ՝

- Աշակերտներին անմիջականորեն վերաբերող հարցերը ազատորեն ներկայացնել և կարծիք հայտնել
- Ուսման որակի բարելավման համար առաջարկվող լուծումներ
- Մասնագիտական կողմնորոշման խմբակի գործունեություն

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ

- կարևորել աշակերտական ինքնակառավարումը
- խթանել սովորողների նախաձեռնությունները,օժանդակել դրանց իրագործմանը,
- սովորողներին մասնակից դարձնել իրենց վերաբերող խնդրահարույց հարցերում տնօրինության կողմից որոշումների ընդունմանը,
- սովորողների ակտիվ մասնակցությունը ուսումնառության ներքին կարգապահական կանոնների մշակմանը,
- Ամրապնդել ուսուցիչ-աշակերտ,ծնող-աշակերտ,համայնք-աշակերտ կապը
- Օժանդակել սովորողների կողմից կազմակերպվող միջոցառումներին,
- Աշակերտական խորհրդի միջոցով հանդուրժողականությանն ուղղված սեմինարներ ու քննարկումներ կազմակերպել
- աշակերտական խորհուրդը՝ ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան, անմիջականորեն աշակերտներին վերաբերող հարցերի մասին կարծիք է ներկայացնում հանրակրթական դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմիններին
- աշակերտական խորհրդի ներկայացուցիչը, խորհրդակցական ձայնի իրավունքով, մասնակցում է խորհրդի և մանկավարժական խորհրդի այն նիստերին , որտեղ քննարկվում են աշակերտներին անմիջականորեն վերաբերող հարցեր:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ՝

Աշակետական խորհուրդը ձևական բնույթ չի կրում ու դառնում է դպրոցի, համայնքի կյանքի ակտիվ մասնակից ու առաջ մղող ուժ:

6.2.4 ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Շրջանավարտների խորհուրդը ձևավորվում է դպրոցի տարբեր տարիների շրջանավարտներից,մշակում է սեփական աշխատակարգը:Շրջանավարտների խորհուրդը նպաստում է դպրոցի զարգացմանը,օժանդակում է նյութատեխնիկական բազայի հարստացման գործընթացին,հանդես է գալիս առաջարկություններով ինչպես նաև ֆինանսական միջոցներով կարող է ձևավորել արտաբյուջե:Հոգաբարձուների խորհրդի կազմում կարող են ընդգրկվել հանրակրթական դպրոցի գործունեությամբ շահագրգիռ անձինք, անհատ ձեռներեցներ, տեղական իշխանության ներկայացուցիչներ:Հոգաբարձուների խորհուրդը կազմվում է առնվազն հինգ հոգաբարձուներից:Հոգաբարձուների խորհրդի նիստն իրավասու է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների կեսից ավելին:Հոգաբարձուների խորհրդի որոշումները ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Խորհրդի նիստեր գումարվում են տարվա ընթացքում առնվազն չորս անգամ: Հոգաբարձուների խորհրդի նիստերն արձանագրվում են:

ՆՊԱՏԱԿ՝

Ներգրավել դպրոցի զարգացման համար շահագրգիռ անձանց ու խմբերի

ԽՆԴԻՐՆԵՐ՝

- շրջանավարտների ու հոգաբարձուների խորհուրդների ձևավորում
- շրջանավարտների ու հոգաբարձուների խորհուրդների ծրագրային գործունեության հստակեցում

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ

- օժանդակել հանրակրթական դպրոցի համար ֆինանսական միջոցների հայթայթմանը, նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, արտաբյուջետային ֆոնդի ձևավորմանը.
- նպաստել հանրակրթական դպրոցի կողմից իրականացվող լրացուցիչ, ինչպես նաև օրենքին և հանրակրթական դպրոցի կանոնադրությանը չհակասող այլ ծրագրերի իրականացմանը.
- աջակցել սոցիալական ծրագրերի իրականացմանն ու ամառային հանգստի կազմակերպմանը.
- լսել իր հատկացրած միջոցների նպատակային ծախսման վերաբերյալ տնօրենի հաշվետվությունը.
- մասնակցել հանրակրթական դպրոցի զարգացման ծրագրերի քննարկմանը.
- իր կազմից ընտրել է հանրակրթական դպրոցի մանկավարժական խորհրդի անդամ.
- օժանդակել այլ ուսումնական հաստատությունների հետ հանրակրթական դպրոցի համագործակցությանը, միջազգային կապերի ստեղծմանը
- հոգաբարձուների խորհրդի տրամադրած ֆինանսական միջոցները մուտքագրել հանրակրթական դպրոցի արտաբյուջետային հաշվին:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ՝

Ունենալ արտաբյուջե ձևավորող ու դպրոցի խնդիրներին մշտապես տեղյակ ու հոգացավ,առաջացած հիմնախնդիրների համար լուծում առաջարկող մարմին:

6.3 Համագործակցություն

Դպրոցի նյութատեխնիկական բազայի բարելավման և սովորողներին ու մանկավարժներին հասարակական կյանքին ակտիվորեն ներգրավելու համար անհրաժեշտ է մշտապես համագործակցել առանձին կառույցների և նրանց ներկայացուցիչների հետ: Ստորև ներկայացված Գծապատկերը արտահայտում է այդ համագործակցության տեսլականը:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
•Դպրոցն համագործակցում է ՀՀ Կառավարության, ՀՀ ԿԳՄՍ նախարարության,ՀՀ Ներքին գործերի ոստիկանության, Գյումրու ՏՄԱԿ-ի, ԿԶՆԱԿ-ի,տեղական ինքնակառավարման մարմինների, ԳԹԿ-ի, արվեստի դպրոցների, հարակից ավագ դպրոցների, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ •Դպրոցի անձնակազմը և աշակերտական համակազմը մասնակցում է համայնքային և մարզային բազմապրոֆիլ միջոցառումների՝ օլիմպիադաներ, շաբաթօրյակներ, սպորտային տարատեսակ միջոցառումներ և այլն •Ծնողական խորհուրդը մասնակցում է արտադասարանական միջոցառումներին՝ օժանդակելով դրանց ծրագրմանն ու իրագործմանը	•Դպրոցը չունի շրջանավարտների, հոգաբարձուների խորհուրդ, ինչպես նաև բարերարներ, որպեսզի լուծվեն արտադպրոցական միջոցառումների ֆինանսավորման հարցը •Ծնողները նախաձեռնող չեն

Նպատակ

Սովորողներին պատրաստել ինքնուրույնության և նպաստել սոցիալականացմանը,դարձնել նախաձեռնող

Խնդիրներ

Համագործակցել բոլոր կառույցների հետ, որոնք ապահովում են կրթության որակ, նպաստում են քաղաքացիական հասարակության ձևավորմանը

Գործողություններ

•Կրթության կառավարման լիազորված մարմնի, համայնքի և շահառու կազմակերպությունների հետ համագործակցության ոլորտի ընդլայնում
•Համագործակցության ընթացքում կազմակերպել գեղագիտական, մարզական միջոցառումներ

Պատասխանատուներ

•Տնօրեն
•Համակարգող
•Տնօրենի տեղ. Ուս. գծով
•Տնօրենի ՄԿԱ գծով տեղ.
•Մանկավարժական խորհուրդ
•Ծնողական խորհուրդ

Ժամանակացույց

•2023-2028թթ. Յուրաքանչյուր տարի ըստ համադպրոցական տարեկան աշխատանքային պլանի

Գյումրու թիվ 30 հիմնական դպրոց
ԳԹԿ
Շիրակի մարզպետի աշխատակազմ
ՀՀ Իրավապահ մարմիններ
Տեղական ինքնակառավարման մարմիններ
ԶԼՄ
Առողջապահական կազմակերպություններ
Միջին մասնագիտական հաստատություններ
Նուհեր
Արվեստի դպրոցներ
Հարակից հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցներ
ԿԶՆԱԿ
ԿՏԱԿ
ՏՄԱԿ
ԿԳՆՄՆ

6.4. Աշակերտական համակազմ

ՀՀ պետական հանրակրթական դպրոցներում, որոնք տվյալ բնակավայրում միակը չեն, առաջին դասարանցիների ընդունելությունը կատարվում է առցանց համակարգի միջոցով: Բոլորի համար հավասար մեկնարկային պայմաններ ապահովելու նպատակով յուրաքանչյուր ծնող, աշխարհի ցանկացած ծայրից, իր երեխային կարող է առցանց համակարգով գրանցել պետական հանրակրթական դպրոցներում՝ առաջին դասարան հաճախելու համար: Դպրոց ընդունելության ժամանակ սովորողի գիտելիքների ստուգում չի թույլատրվում:

Աշակերտները ոչ միայն մտավոր, այլև սոցիալական և հուզական (էմոցիոնալ) անհատականություններ են, և այս ամենն ազդում է նրանց սովորելու արդյունավետության վրա: Որպեսզի հասկանանք, թե ովքեր են մեր աշակերտները, պետք է հաշվի առնենք `

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1.ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ սովորում են որպես հավասար դասընկերներ,առանց խտրական վերաբերմունքի:	1.Նկատվում է աշակերտների նվազում:
2.Մեծահասակներից առավել լավ են տիրապետում ՏՀՏ ոլորտին:	2.Ուսման առաջավորների նվազում կա:
3.Ակտիվ մասնակցում են դասարանական և համադպրոցական միջոցառումներին:	3.Ընթերցասիրությունը շատ քիչ է,որի հետևանքով պատկերավոր խոսքի մշակույթը չի ձևավորվում:
4.Բոլոր աշակերտներն ապահովված են անհրաժեշտ դասագրքերով և օգտվում են թե՛ դպրոցի, թե՛ մանկական գրադարանից,որը մոտ է դպրոցին:	4. Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաները հաճախ են բացակայում
5.Շատ աշակերտներ հաճախում են արտադպրոցական խմբակների՝սպորտային, երաժշտական դպրոց,պարարվեսի խմբակ,ԹՈՒՄՈ կենտրոն:	5.Աշակերտների ինքնագնահատման օբյեկտիվությունը ցածր է:
6.Մարզային և տարածքային սպորտլանդիաներում դպրոցը գրանցում է շարունակական առաջընթաց:	

ՆՊԱՏԱԿ

- Սովորողների անհատական կրթական կարիքների բավարարմանն ուղղված աշխատանքներ:
- Կրթության պայմանների և որակի շարունակական բարելավում, ուսումնադաստիարակչական համակարգի կատարելագործում,աշակերտների մրցունակության բարձրացում, համակողմանի զարգացում, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակում և մասնագիտական կողմնորոշման ապահովում

ԽՆԴԻՐՆԵՐ

•Ըստ հանրակրթական պետական չափորոշչի ութ կարողունակությունների ձեռք բերում և ձևավորում:

•Ուսումնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացման ապահովում:

•Սովորողների մոտիվացիայի խթանում,ուսման որակի բարձրացում, աշակերտական ինքնավարության ապահովում,արժեհամակարգի ձևավորում

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

•Ուսումնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի ուսուցման համար ամրապնդել սովորողների տեսական գիտելիքների և գործնական ունակությունների փոխադարձ կապը

•Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար իրենց կրթական կարիքներին համապատասխան կրթություն կազմակերպել

•Արտակարգ ընդունակություններ դրսևորած աշակերտների համար կազմել ԱՈՒՊ(անհատական ուսումնական պլան)

•Հանրակրթությունից դուրս մնացած աշակերտների հայտնաբերում և դպրոց ներգրավում:

- Միջոցառումների, մրցույթների, ուսումնական բանավեճերի , էքսկուրսիաներ, այցելություններ թանգարաններ և պատկերասրահներ, թատրոններ,նշանավոր անձանց հետ հանդիպումների կազմակերպում, ֆիլմերի դիտում և այլն:
- Աջակցել աշակերտներին առարկայական օլիմպիադաներին ավելի պատրաստված մասնակցելու գործում
- Զարգացնել աշակերտների քննադատական մտածողությունը, մեդիագրագիտությունը, հանրային ելույթին և բանավիճելու կարողությունները
- Նպաստել աշակերտների գեղագիտական դաստիարակությանը, ստեղծագործական կարողությունների դրսևորմանը և զարգացմանը
- Համագործակցել այլ կազմակերպությունների հետ՝ ուսումնաարտադրական բազաներում, մարզաառողջարարական ճամբարներում սովորողների ուսուցման, դաստիարակության ու հանգստի կազմակերպման համար

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ՝

- Աշակերտների անհատականության դրսևորում
- Ուսման նկատմամբ մոտիվացիայի բարձրացում, որակի բարելավում:
- Աշակերտների գիտատեխնիկական կարողունակությունների ձևավորում
- Ճանաչողության և հետաքրքրությունների զարգացում
- Զարգացնել աշակերտների մշակութային կարողունակությունները և արժեքային համակարգի ձևավորում :
- Առողջության պահպանում և ամրապնդում, հանգստի և ժամանցի կազմակերպում

6.5 Մանկավարժական համակազմ

Ուսուցիչները և աշակերտները մեկ միասնական համակարգ են, և նրանց գործունեությունը փոխկապակցված է: Պետք է կարողանալ գնահատել մանկավարժական պոտենցիալը, ինչի համար պետք է ունենալ գնահատման չափանիշներ: Կարելի է ուսուցչին գնահատել՝ ըստ նրա կրթության և փորձառության, ըստ նրա՝ ուսուցման գործընթացում ունեցած հաջողությունների, ըստ դպրոցի զարգացման գործընթացում ունեցած ներդրման: Չափանիշներ կարող են լինել՝

1. Ունի բարձրագույն մասնագիտական կրթություն:
2. Ունի աշխատանքի 5 և ավելի տարվա փորձ:
3. Ուսուցման գործընթացում կիրառում է դասավանդման այնպիսի մեթոդներ և հնարներ, որոնք աշակերտներին հնարավորություն են տալիս ստանալու բավարար գիտելիքներ, ձեռք բերելու անհրաժեշտ կարողություններ և հմտություններ:
4. Գիտի գնահատման մեթոդաբանությունը և կարողանում է այն կիրառել:
5. Գիտի առարկայի չափորոշիչները և դասավանդելիս առաջնորդվում է չափորոշիչներով:
6. Աշխատանքում պատասխանատու է և պարտաճանաչ, նպաստում է դպրոցի ուսումնական և վարչական աշխատանքների կազմակերպմանը, ուսումնասիրում է գոյություն ունեցող փորձը և տարածում է իրենը:
7. Գիտի և հարգում է երեխաների իրավունքները:
8. Պահպանում է մանկավարժական էթիկայի կանոնները:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1.Բոլոր ուսուցիչներն ունեն բարձրագույն կրթություն: 2.Դպրոցն ունի երկու լաբորատորիա և համակարգչային կաբինետ, ինչպես նաև տարաբնույթ դիդակտիկ պարագաներ , որոնք օգնում են դասերն առավել արդյունավետ կազմակերպել: 3.Դպրոցըն ուսումնադաստիարակչական տարեկան աշխատանքային պլան կազմելիս ապահովում է աշակերտակենտրոն մոտեցում: 4.Դպրոցը մասնակցում է ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպվող և անցկացվող բոլոր սեմինարներին և վերապատրաստումներին: 5.Կազմակերպվում են տարբեր թեմատիկ միջոցառումներ,նպատակային էքսկուրսիաներ : 6. Կազմակերպվում բաց դասեր՝ ՏՀՏ կիրառմամբ, լաբորատոր և գործնական աշխատանքների միջոցով:	1. Կա մասնագիտական մեթոդական խորհրդատվության պակաս: 2.Առարկայական մասնախմբերը չեն համագործակցում հարակից դպրոցների մ/մ-ների հետ: 3.Լաբորատորիաների գույքը ֆիզիկապես մաշված է 4.Ընդամենը մեկ ուսուցիչ ունի տարակարգ և խուսափում են կամավոր ատեստավորումից: 5.Ուսուցիչները դեռևս դժվարանում են օգտվել համակարգչային տարբեր ծրագրերից 6.Ուսուցիչները դեռևս չեն տիրապետում նոր ՀՊՉ-ին թեև անցնում են վերապատրաստում: 7.Կա ուսուցիչների շարունակական ինքնակրթվելու պակաս:

ՆՊԱՏԱԿ

Դպրոցի մանկավարժական համակազմի որակական բարելավում, որը դպրոցի ***ռազմավարություններից*** մեկն է: Այն ենթադրում է 16 փետրվարի 2023 թվականի N 216-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջների կատարում:

ԽՆԴԻՐՆԵՐ

- Ուսուցիչների շարունակական ինքնակրթմանը ուղղված աշխատանքների կազմակերպում
- Ուսուցիչների հեղինակության և դերի բարձրացում

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ուսումնասիրել, ընդհանրացնել մանկավարժական առաջավոր փորձը և ներդնել պրակտիկ աշխատանքում:
- Որակավորման տարակարգ չունեցող, սկսնակ ուսուցիչներին նախապատրաստել ատեստավորման:
- Կազմակերպել մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ:
- Ուսուցիչներին հաղորդակից դարձնել մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպել սեմինարներ, մանկավարժական մեթոդական ընթերցումներ:
- Նպաստել ուսուցիչների որակավորման բարձացմանը `կազմակերպելով համակարգչային գրագիտությանն ուղղված գործնական դասընթացներ:
- Ընդլայնել տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման գործընթացը, ձեռք բերել ոչ միայն նոր համակարգիչներ, այլև էլեկտրոնային գրատախտակ:
- Ուսուցիչների արդյունավետության գնահատում և լավագույն ուսուցիչների խրախուսում(բազմաբնույթ ուսումնասիրություններ, շնորհակալագրեր, պատվոգրեր և այլն)

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ՝

- Դպրոցի վարկանիշի և հեղինակության բարձրացում
- Դասավանդման արդյունավետության բարձրացում,ուսման որակի բարելավում
- Համակարգչային գրագիտության և ՏՀՏ կիրառման կարողությունների բարձրացում
- Աշխատանքի նկատմամբ մոտիվացիայի բարձրացում
- Ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավում

6.6 Ուսումնական միջավայրը

Ուսումնական միջավայրի ճիշտ վերլուծությունը զարգացման ծրագրի կարևոր գործոններից է: Ուսումնական միջավայրը դասասենյակների և առարկայական կաբինետների, դասագրքերի և այլ գրականության, սարքավորումների և մուլտիմեդիայի, դպրոցում ձևավորված սովորեցնելու և սովորելու ավանդույթի, դպրոցի ներսում և դպրոցից դուրս առկա հասարակական հարաբերությունների ամբողջությունն է: Այն պայմանավորված է նշված բոլոր ուղղությունների առկայությամբ և փոխկապակցվածությամբ: Դպրոցը կարող է ուժեղ լինել մի ուղղությամբ, բայց այդ ուժը կթուլանա մեկ այլ ուղղության թույլ լինելու պատճառով:

Դպրոցը պետք է ձգտի, որ՝

1. Դասասենյակները և առարկայական կաբինետները վերանորոգված և կահավորված լինեն նոր գույքով,
2. Ապահովված լինի դասագրքերով և ուսումնական այլ գրականությամբ, սարքավորումներով և մուլտիմեդիայով,
3. Դպրոցում ձևավորված լինեն հասարակական այնպիսի հարաբերություններ, որոնք համապատասխանում են երեխաների իրավունքներին և ժողովրդավարական դպրոցի գաղափարներին,
4. Դպրոցում ձևավորված լինի սովորեցնելու և սովորելու ավանդույթ (մշակույթ):
5. Ծնողների և երեխաների սոցիալական պատկերը պետք է նկարագրվի դպրոցի ուսումնական ծրագրում, արտացոլվի ուսումնական պլանում և իրականացվի ուսումնառության ընթացքում:

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
1. Դպրոցի շենքը տիպային է, ունի հարմարավետ շենքային պայմաններ:	1.Լաբորատորիաները համալրված չեն անհրաժեշտ նյութերով:
2.Դպրոցն համագործակցում է ԿՏԱԿ-ի,ԿՁՆԱԿ-ի,ԳԹԿ-ի ԱԻՆ-ի, իրավապահ մարմինների,մարզային գրադարանի և այլ կառույցների հետ	2.Օլիմպիական խմբակներ, բանավեճի ակումբ չկա:
3.Առկա է համակարգչային կաբինետ՝ ինտերնետ կապով,գործում է<<Արմաթ>> ռոբոտաշինության լաբորատորիան	3.Համակարգչային կաբինետն անհրաժեշտ է համալրել նոր համակարգիչներով և պրոյեկտորներով:
4.Դպրոցն ունի 2 լաբորատորիա:	4.Դպրոցի մեջ թեքահարթակների բացակայություն:
5. Գրադարանը ապահովված է դասագրքերով, գեղարվեստական, մեթոդական և ծրագրային գրականությամբ:	Սմարթ ընթերցասրահի ստեղծում:
6. Դպրոցն ունի շուրջօրյա ջրամատակարարում, լոկալ ջեռուցում:	Աշակերտների փոխանակման տարբեր ծրագրերի մասնակցություն՝օրինակ <<ԻՄ համայնքը>>:

ՆՊԱՏԱԿ

Ժամանակակից կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան բարոյահոգեբանական,ֆիզիկական միջավայրի ստեղծում:

ԽՆԴԻՐՆԵՐ

- Ներառական կրթության բարելավում
- Ռեսուրս սենյակի ստեղծում
- Սովորողների ինտեգրում ուսումնական միջավայր
- Ծնողների մասնակցություն ուսումնական միջավայրի կայացման գործում

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

Ձեռնարկվող քայլեր	Արդյունքի ակնկալում	Պատասխանատու	Ժամկետ
Սեմինարների,դասախոսությունների միջոցով կազմակերպել ծնողների ուսուցում	Հզորանում է ծնող-դպրոց կապը:Ծնողը մասնակցում է դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներ պլանավորմանը,հանդես է գալիս խելամիտ, կիրառելի առաջարկություններով:	Տնօրեն,Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ, դասղեկներ	2023-2028թթ,տարեկան առնվազն 2 անգամ : Օրակարգն ու քննարկումները արձանագրվում են հատուկ գրանցամատյանում
Արտադասարանական նպատակային միջոցառումների կազմակերպում՝ ճանաչողական էքսկուրսիաներ, ձևավորել թատրոն այցելելու մշակույթ	Մանկավարժության մեջ ամրագրված է, որ 6-12տարեկան երեխաները աշխարհն ընկալում ու շրջապատի հետ հարաբերվում են զգայարանների ու տպավորությունների միջոցով:Իսկ 12 տ.-ից սովորողները առավել գիտելիքի են ձգտում	Տնօրենություն, դասղեկներ, ծնող	2023-2024թթ. 2024-2025թթ. 2025-2026թթ. 2026-2027թթ. 2027-2028թթ. Յուրաքանչյուր տարի առնվազն տարեկան 4 անգամ:
Առաջին դասարանցիներին որպես էքսկուրսիա տանել դպրոցի գրադարան: Գրադարանում կազմակերպել հեքիաթների ընթեցում և փոքրիկ բեմականացում սիրելի հերոսների կերպարներով: Միջին և ավագ դպրոցի սովորողների միջոցով կատարել վնասված գրքերի նորոգում, վերականգնում:	Սերը դեպի գիրքը:Խնամքով վերաբերվել գրքերին,չկեղտոտել, չվնասել:Կարևորել ինքնակրթությունը ու սովորել բարին տեսնել:Կարողանան աշխարհն անցկացնեն գրքի պրիզմայով:	Տնօրենություն, գրադարանավար,մ/մ, ուսուցիչներ,մանկավարժական աշխատողներ	2023-2024թթ. 2024-2025թթ. 2025-2026թթ. 2026-2027թթ. 2027-2028թթ. Յուրաքանչյուր տարի հոկտեմբեր և մայիս ամիսներին:
Ներառական կրթությունը դարձնել գերակա՝ ընդունելով, որ յուրաքանչյուր երեխա տարբեր է սովորելու և ընկալելու տեսանկյունից	Սովորողները լիարժեք կիրացնեն հավասար կրթություն ստանալու իրենց իրավունքը	Տնօրենություն, գրադարանավար,մ/մ, ուսուցիչներ,մանկավարժական աշխատողներ, բազմամասնագիտական թիմ	2023-2024թթ. 2024-2025թթ. 2025-2026թթ. 2026-2027թթ. 2027-2028թթ.

Ստեղծել ռեսուրս սենյակ, կահավորել անհրաժեշտ գույքով և ուսումնական նյութերով	Բազմանասնագիտական թիմը կունենա առավել լայն հնարավորություններ իր գործառույթը ըստ նպատակի ծառայեցնելու համար	Լիազոր մարմին,տնօրեն, վարչատնտեսական համակարգող, բազմամասնագիտական թիմ	2023-2025թթ.
Ձևավորել մշտական օլիմպիական խմբեր,ամեն տարի համալրելով նոր, շնորհալի սովորողներով: Ստեղծել բանավեճի ակումբ:	Օլիմպիական խմբերը տարեսկզբից կարող են աշխատել այլընտրանքային ծրագրերով, մասնակցել մարզային, հանրապետական օլիմպիադաների:	Տնօրենություն, մ/մ	2023-2024թթ. 2024-2025թթ. 2025-2026թթ. 2026-2027թթ. 2027-2028թթ
Դպրոցի մեջ թեքահարթակների կառուցում:	ԿԱՊԿՈՒ աշկերտները լիարժեքորեն կկարողանան իրացնել իրենց կրթություն ստանալու իրավունքը և չեն սահմանափակվի միայն շենքի առաջին հարկում տեղաշարժվելով:	Լիազոր մարմին,տնօրեն, վարչատնտեսական համակարգող	2023-2024թթ.
Աշակերտների փոխանակման տարբեր ծրագրերի մասնակցություն՝օրինակ <<ԻՄ համայնքը>>:	Ծանոթանում են տարբեր մարզերի հասակակիցների, նրանց բարբառների, սովորույթների հետ:Ձևավորվում է ընկերասիրություն, հանդուրժողականություն: Մեր երկիրը տեսնում ու սիրում են այլ գույներով:	Տնօրեն Սովորող Ծնող Համայնք	2023-2024թթ. 2024-2025թթ. 2025-2026թթ. 2026-2027թթ. 2027-2028թթ
Սպորտային,պարարվեստի, երգչախմբի, նկարչական խմբակների ձևավորում:	Հնարավորություն տալ սովորողին իր ես-ը դրսևորել տարբեր բնագավառներում, քանզի բազմապրոֆիլ զբաղվածությունը բերում է ուղեղի ակտիվ աշխատանքին, դաստիարակում է կարգապահություն և նպատակասլացություն:	Տնօրենություն, վարչատնտեսական համակարգող,ուսուցիչներ	2023-2024թթ. 2024-2025թթ. 2025-2026թթ. 2026-2027թթ. 2027-2028թթ. Խմբակները ըստ ՀՊՁ-ի կարող են ձևավորվել յուրաքնչյուր ուսումնական տարվա սկզբին:

6. 7 ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

Այն ընդունում է, որ բոլոր երեխաները տարբեր են, իսկ դպրոցներն ու հանրակրթական համակարգը պետք է հարմարվեն բոլոր սովորողների մտավոր, հոգեկան և ֆիզիկական զարգացման կարիքներին և անհատական պահանջմունքներին: Սակայն ներառում չի նշանակում բոլորին ձուլելու կամ միատեսակ դարձնելու ձգտում: Այն ընդունում է, որ երեխաները սովորում են տարբեր արագությամբ, իսկ ուսուցիչներին անհրաժեշտ են հատուկ հմտություններ՝ ուսուցման գործընթացի ճկունությունն ապահովելու համար: Պարզապես երեխաներին անհրաժեշտ է հասկանալի, մատչելի դասավանդում: Իսկ դա իր հերթին ենթադրում է երեխայի առանձնահատկություններին, անհատական կրթական պահանջմունքներին, զարգացման տեմպերին, ընդունակություններին և կարողություններին համապատասխանող տարբեր մեթոդների օգտագործում:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթության նպատակները

1. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթության նպատակը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին իրենց ընդունակություններին և կարողություններին համապատասխան և առողջությանը համարժեք ուսումնական միջավայրում նրանց հասարակական հարմարեցման, ինքնասպասարկման ունակությունների ձեռքբերման, աշխատանքային, մասնագիտական գործունեության և ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովումն է:

ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

Ստեղծել անհրաժեշտ պայմաններ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթություն ստանալու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

- Ուսումնական հաստատությունում յուրաքանչյուր կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի համար կազմել անհատական ուսումնական պլան (ԱՈՒՊ):Պետական աջակցության ֆինանսավորմամբ ստեղծել խելամիտ հարմարեցումներ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող հետևյալ սովորողների համար՝

ա) խոսքի ծանր խանգարումներ, հնչյունահնչույթային և խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող

բ) լսողության խանգարում՝ չլսող (խուլ), թույլ լսող և լսողության կորուստ ունեցող

գ) տեսողության խանգարում՝ կույր, թույլ տեսնող, ուշ կուրացած, շլություն ունեցող

դ) մտավոր հետամնացություն ունեցող

ե) հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող

զ) հոգեբանական զարգացման խնդիրներ՝ուսումնական ունակությունների զարգացման յուրահատուկ խանգարումներ ունեցող

է) վարքային և հուզակամային ոլորտի խանգարումներ ունեցող

ը) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով իրականացնել առանձին մարզական պարապմունքներ

- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության իրավունքը ապահովելու նպատակով առանձնացնել հատուկ կրթության կառուցվածքային ստորաբաժանումներ, բացառապես կրթության պետական կառավարման լիազոր մարմնի որոշմամբ:
- Մանկավարժների և ներառական կրթության մյուս մասնակիցների կարողությունների զարգացում, փորձի փոխանակում, շարունակական աջակցության ապահովում, մեթոդական զինանոցի համալրում(համագործակցություն ՏՄԱԿ-ի ,ՀՄԿ-ի , ուսումնական հաստատությունների հետ)

- Շենքային պայմանների(թեքահարթակներ, սանհանգույցներ,սենյակներ, մարզադահլիճ, հանդիսությունների սրահ և այլն) հարմարեցում ԿԱՊԿՈՒ սովորողների կարիքներին
- Նյութատեխնիկական ռեսուրսներով հագեցվածության ապահովում

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ՝

- Ներառական կրթության ոլորտում աշխատակազմի գիտելիքների և հմտությունների ձևավորում , մեթոդական և գործնական առումով պատրաստվածություն
- ԿԱՊԿՈՒ սովորողների համար ռեսուրս-սենյակի ստեղծում, համապատասխան ուսումնամեթոդական նյութերով և սարքավորումներով համալրում
- Ֆիզիկական մատչելիության ապահովում
- Ներառականությունը խաթարող սոցիալական խոչընդոտների հաղթահարում՝ կարծրատիպեր, վերաբերմունք:

6.8. Կրթության որակը

Կրթության որակը կարելի է բարձրացնել՝ բացահայտելով իրավիճակը գնահատելու միջոցով այն փոխելու հնարավորությունները: Անհրաժեշտ է դիտարկել հետևյալ գործոնները.

1. Ուսումնական գործընթացի փաստացի վիճակը:
2. Կրթական գործընթացի կատարողականը:
3. Կրթական գործընթացի արդյունավետությունը:
4. Կրթական գործընթացի որակը կրթական աստիճաններում:
5. Դասերի, ուսումնական միջոցառումների որակը:

Կրթության որակի և առաջադիմության վրա ուսումնադաստիարակչական աշխատանքների ազդեցության գնահատման չափանիշները:

Դպրոցում յուրաքանչյուր սովորողի, կրթական կարիքների, արտակարգ ընդունակություններ, ցածր առաջադիմություն ունեցողների, ինչպես նաև հանրակրթությունից դուրս մնացած երեխաների համար կազմակերպել, իրականացնել լրացուցիչ հանրակրթական ծրագրեր,արտադասարանական խմբակներ, որոնք կնպաստեն կրթության որակի բարձրացմանը:

Ձեռնարկվող քայլեր	Ակնկալվող արդյունք	Պատասխանատու անձ	ժամկետներ
Յուրաքանչյուր ամիս Էլեկտրոնային մատյանում ստուգել աշակերտների ընթացիկ միավորային գնահատականները,բացակայությունները:Առաջադիմության անկում նկատելու դեպքում արագ քայլեր ձեռնարկել իրավիճակը շտկելու համար:	Կանխել անհարգելի,կամայական բացակայություն Ները,նախապես միջոցներ կիրառել աշակերտի կրթական որակի բարելավման ուղղությամբ	Դասղեկ Ծնող Տնօրենի տեղակալներ տնօրեն	2023-2028թթ. Յուրաքանչյուր ամիս
Մնացորդային գիտելիքների ստուգում սեպտեմբեր ամսին և ամփոփիչ ստուգում յուրաքանչյուր կիսամյակի ավարտին:	Ընդհանուր պատկերացում կազմել նախորդ տարվա գիտելիքների մնայուն, մնացորդային վիճակի մասին	Տնօրեն Տնօրենի տեղակալներ Մեթոդ միավորում Առարկայի ուսուցիչ	2023-2028թթ, սկիզբը յուրաքնչյուր ուսումնական տարվա սեպտեմբերի երկրորդ կեսից
Ցածր առաջադիմություն ունեցող սովորողների բացահայտում և համապատասխան երկարօրյա խմբի մեջ ներգրավում:	Սովորողները հնարավորություն կունենան տարբեր մեթոդների կիրառման միջոցով հասկանալ մատուցվող նյութը	Տնօրեն Տնօրենի տեղակալներ Մեթոդ միավորում Առարկայի ուսուցիչ	Հայտորորոշիչ թեստերը տրվում են սեպտեմբեր կեսից և շարունակաբար երկու ամիսը մեկ ստուգվում են առաջադիմության որակը
Նպաստել նոր նախաձեռնությունների իրականացմանը, նախագծային աշխատանքների կատարմանը:	Պահելով ունեցած ձեռքբերումները, նոր նախաձեռնությունները կավելացնեն որակական փոփոխություն, իսկ նախագծային աշխատանքները գործնական հիմք են կարողունակությունները զարգացնելու համար	Տնօրեն Համակարգող Տնօրենի տեղակալներ Մեթոդ միավորում Առարկայի ուսուցիչ	2023-2028թթ. յուրաքանչյուր տարի օգոստոսի երկրորդ շաբաթից սկսվում են նման աշխատանքների ծրագրավորումը
Խրախուսել, պարգևատրել այն ուսուցիչներին, ովքեր ունեն ձեռքբերումներ(օլիմպիադաներին հաղթողներ, տարբեր մրցույթի ասնակիցներ և այլն), հանդես են գալիս նոր գաղափարներով:	Խրախուսված ուսուցիչը իրեն կզգա գնահատված, որը ևս մեկ դրական խթան կհանդիսանա աշխատանքային բարձր արդյունավետության համար	Տնօրեն Համակարգող Տնօրենի տեղակալներ Մեթոդ միավորում Առարկայի ուսուցիչ	2023-2028թթ. տարվա ընթացքում,երբ ամփոփվում են կիսամյակները կամ ուսումնական տարին

6.9. Նորարարություն և տեխնոլոգիաներ

Մանկավարժական գիտության, կրթական նոր տեխնոլոգիաների զարգացումն էլ ավելի է խթանում դասավանդման նոր մեթոդների, ուսուցման նոր ձևերի մշակումը: Այսօր արդեն նորություն չեն դասավանդման փոխներգործուն, աշակերտակենտրոն մեթոդները, ուսուցման կազմակերպման տարբեր եղանակները, հեռավար ուսուցման ձևերը:Դպրոցում այսպիսի փոփոխություններ կատարելը պահանջում է ժամանակ և միջոցների ներդրում: Հնարավոր չէ մեկ սեմինարի կամ վերապատրաստման դասընթացի միջոցով բոլոր ուսուցիչների մոտ ձևավորել ուսուցման ժամանակակից մեթոդների, ՏՀՏ-ների արդյունավետ կիրառման կարողություններ: Ուսուցիչը պետք է ժամանակ ունենա նոր գիտելիքներ ստանալու, դրանք գործածելու, սխալները ուղղելու և մոտեցումները վերանայելու համար: Դպրոցի վարչական կազմն էլ պետք է կարողանա ուսուցչի աշխատանքը վերահսկել, անհրաժեշտ օժանդակություն ցույց տալ և ապահովել նոր ստացած գիտելիքների և հմտությունների կիրառումը:

Մյուս կողմից՝ ցանկալի է, որ դպրոցն ըստ իր զարգացման առաջնահերթությունների ներդնի գիտականորեն հիմնավորված որևէ նոր, զարգացում ապահովող գիտամանկավարժական նորարարություն: Այն հնարավորություն կտա դպրոցի աշխատակիցներին, աշակերտներին և ծնողներին, ինչպես նաև հիմնադրին գնահատելո դպրոցի ջանքերը գիտական տեսանկյունից՝ դրանով դպրոցը առանձնացնելով մյուս դպրոցներից, օգտագործելով, տարածելով հաջողված փորձի արդյունքները:

• ՏՀՏ-ների կիրառման միջոցով բարձրացնելու ուսուցման արդյունավետությունը, ուսուցման կազմակերպման կոլեկտիվ եղանակի միջոցով ապահովել սովորողների անհատական առաջընթացը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

• Գործածվող փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակի կիրառություն
• Մեդիագրագիտության ուսուցում
• Էլեկտրոնային մատյանների լրացում և վերահսկողություն
• Դասապրոցեսի,արտադասարանական խմբակների,նախագծային աշխատանքների կազմակերպում
• Հեռավար, համակցված դասերի կազմակերպման համար գործնական սեմինարների կազմակերպում:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ՝

•Առավել հարմար է ունենալ էլեկտրոնային թղթապանակ, որը կազատի ավելորդ թղթաբանությունից
•Մեդիագրագիտություն ունեցող աշխատակիցը և սովորողը առավել մցունակ են,ինչպես նաև ավելի քիչ կդառնան մեդիահակերության կամ խաբեության զոհ
•Էլեկտրոնային դասամատյանները հնարավորություն են տալիս ամենօրյա վերահսկողություն կատարել մանկավարժների աշխատանքի և սովորողների առաջադիմության հարցում
•Կապված ֆորս մաժորային իրավիճակների հետ սովորողը, ուսուցիչը, ծնողը կարող են կազմակերպել դասեր, հանդիպումներ,ժողովներ, քննարկումներ առցանց եղանակով
•Հեռավար դասերի ժամանակ մանկավարժը և սովորողը կարող են օգտվել լրացուցիչ ուսումնական նյութերից, որոնք տեղադրված են ԿԶՆԱԿ-ում, Պաշարների շտեմարանում և այլ կրթական միջավայրերում:

- 7. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Հանրակրթությունը պետք է իրականացվի ազգայինի հենքի վրա՝ համամարդկային արժեքների ներդաշնակ զուգորդմամբ:
- Հանրակրթությունը պետք է նպաստի մարդու և քաղաքացու շահերին, ծառայի անհատին ու ժողովրդին:
- Հանրակրթությունը իրականացվում է ՀՀ պաշտոնական լեզվով՝ գրական հայերենով: Այն նպատակաուղղված է հայոց լեզվի, հայ ժողովրդի մշակութային ժառանգության պահպանմանն ու զարգացմանը, ազգային ինքնության ու միասնության պահպանմանը:

- Դպրոցում հարկավոր է հաստատել հանրակրթության կազմակերպման հետևյալ սկզբունքները.
- Հանրակրթությունն իրականացվում է ուսուցման և դաստիարակության միասնականության սկզբունքով՝ պահպանելով իր աշխարհիկ բնույթը, զերծ մնալով խտրականությունից ու սահմանափակումներից: Այն հավասարապես մատչելի է յուրաքանչյուրին՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:
- Հիմնական կրթությունը պարտադիր և հասանելի է յուրաքանչյուր անձի՝ անկախ նրա հետաքրքրություններից, մասնագիտական նախնական կողմնորոշումից, մտավոր և ֆիզիկական կարողություններից:
- Հանրակրթությունն իրականացվում է՝ սովորողների տարիքային առանձնահատկություններին և զարգացման մակարդակին համապատասխան:

7.1 ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Հանրակրթական պետական չափորոշչով սահմանվում են հանրակրթության հիմնական ծրագրերի բովանդակության հետևյալ բաղադրիչները՝

1) գիտելիք.

2) հմտություն.

3) դիրքորոշում.

4) արժեքային բաղադրիչ:

Այսօր, երբ կրթական բարեփոխումների հիմնական պահանջներից մեկը դարձել է աշակերտակենտրոն ուսուցումը, անցում է կատարվել գիտելիքակենտրոն համակարգից ուսուցման եռակենտրոն համակարգի՝ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, արժեքային համակարգ, և խնդիր է դրվել սովորեցնել ու սովորել, առաջնային պլան են մղվում այդ խնդիրների լուծմանն ուղղված մեթոդներն ու մեթոդական հնարները: Այդ նպատակով անհրաժեշտ է սովորողին ծանոթացնել ճանաչողության մեթոդներին և ձևավորել դրանք գործնականում կիրառելու կարողություններ և հմտություններ:

- Հանրակրթական միջնակարգ ծրագիրը պետք է միտված լինի հետևյալ ակնկալվող վերջնարդյունքների ապահովմանը: Ծրագրի ավարտին շրջանավարտը պետք է գրական հայերենով ստեղծի տարբեր ոճերի և ժանրերի գրավոր և բանավոր խոսք՝ օգտագործելով տարբեր արտահայտչամիջոցներ և համապատասխանեցնելով դրանք իրավիճակներին (ազգային փոքրամասնությունների դպրոցների պարագայում կարող է նաև իր մայրենի լեզվով, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման միջոցով):
- Առնվազն երկու օտար լեզվով, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման միջոցով, բավականին սահուն և հանպատրաստից բանավոր շփվի լեզվակիրների հետ:
- Վարի առողջ և անվտանգ ապրելակերպ.
- Բացատրի ֆիզիկական ակտիվության կարևորությունը և մարզվի իր նախընտրած ձևով.
- Տիրապետի զինվորական պատրաստվածության հիմունքներին և ցուցաբերի առաջին օգնություն՝ ըստ անհրաժեշտության.

.

- Քննարկի, հայտնի դիրքորոշում և կատարի գիտակցված ընտրություն աշխարհաճանաչողության ձևերի վերաբերյալ.
- Վերլուծի իր ազգի ձևավորման և զարգացման պատմական ուղին, քաղաքացու դիրքից արժևորի Հայաստանի Հանրապետությունը որպես իր ներկան և ապագան կերտելու միջավայր.
- Ցուցաբերի հարգանք և անաչառ, անհատական ու ինքնագիտակից մոտեցում ավանդույթների և հասարակական համակեցության կանոնների վերաբերյալ՝ դիտարկելով դրանք մարդու իրավունքների և այլ անձանց նկատմամբ հարգանքի տեսանկյունից.
- Վերլուծի իր ուսումնառության գործընթացը, ընտրի ինքնակրթության մեթոդներ և գնահատի դրանց արդյունավետությունը.
- Քննադատաբար վերլուծի տեղեկատվությունը, հասկանա մեդիա ուղերձների ստեղծման գործընթացը, տարբերակի կիրառվող մանիպուլյացիաները և քննարկի դրանց նպատակները.
- ՈՒրիշների հետ համագործակցելով և ինքնուրույն մշակի և իրականացնի նախագծեր՝ ձեռք բերած գիտելիքը կամ գործնական արդյունքը ներկայացնելով տարբեր միջոցներով.
- Նախաձեռնի կամ ակտիվորեն ներգրավվի տարատեսակ հանրօգուտ միջոցառումներում՝ ըստ սեփական հետաքրքրությունների.
- Արդյունավետ օգտագործի կոնֆլիկտին միջամտելու և լուծելու տարբեր մեթոդներ, պատրաստակամ լինի ապրումակցել և աջակցել դժվար իրավիճակում հայտնված ցանկացած մարդու կամ կենդանու.
- Վերահսկի իր զգացմունքները և ցանկությունները, իր առջև դնի նպատակներ, մշակի դրանց հասնելու ուղիներ և լինի հետևողական.
- Կարևորի իր՝ որպես քաղաքացու դերը հասարակության մեջ սոցիալական արդարության և ժողովրդավարական մշակույթի ձևավորման գործում, ցուցաբերի հարգանք ցանկացած մարդու արժանապատվության, հիմնարար իրավունքների և ազատությունների հանդեպ.
- Ցուցաբերի ակտիվ դիրքորոշում հասարակական գործընթացներում կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ընձեռման ապահովման համար.
- Ճանաչի իր դերը և պատասխանատվությունը ընտանիքում, խմբում և հասարակության մեջ:

7.2 ԴՊՐՈՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ

ՆՊԱՏԱԿ՝

• դաստիարակչական գործընթացներում առաջնորդվել միասնական սկզբունքներով և կանոններով, միասնական մանկավարժական պահանջներով

• ծնողներին ակտիվորեն ընդգրկել դպրոցի դաստիարակչական գործընթացներում

• հետևել, որ դաստիարակչական աշխատանքները հիմնվեն հստակ նախագծված դասղեկական պլանների վրա

• վերլուծել դպրոցի դաստիարակչական միջավայրը և բացահայտելով առկա խնդիրները և բացթողումները՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ

• քայլեր ձեռնարկել աշակերտների, ինչպես նաև աշակերտների և ուսուցիչների միջև բավարար համագործակցություն, հաղորդակցության համարդրական միջավայր ստեղծելու ուղղությամբ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

• Առավել աշխույժ և լիդերի հատկանիշներով օժտված աշակերտների օգնությամբ ստեղծել <<Արագ արձագանքման խումբ>>, ովքեր պարբերաբար տեսական ու գործնական խորհրդատվություններ կստանան ԱԻՆ մարզային փրկարար վարչությունից

• դասղեկական ժամերի և արտադասարանական միջոցառումների միջոցով իրականացնել բարոյական և հայրենասիրական դաստիարակության ծրագրեր

• ընդլայնել ինչպես դասարանների, այնպես էլ առանձին աշակերտների ներդպրոցական և արտադպրոցական դաստիարակչական բնույթի միջոցառումներին մասնակցելու հնարավորությունները

• Ծնողներին ներգրավել միջոցառումների պլանավորմանը

• Իրականացնել համայնք-դպրոց հանրօգուտ ծրագրեր

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ՝

- Ունենալ բազմակողմանի զարգացած սովորող, ով կարող է սեփական կարծիք ձևավորել ու հիմնավորել
- Ունենալ այնպիսի շրջանավարտ, ով իր շարունակական կրթությունը ապահովելու համար կարող է գիտակցաբար ընտրել անհրաժեշտ ուսումնական հաստատություն
- Դպրոցի շրջանավարտը կարողանա դառնալ քաղաքացիական հասարակության լիարժեք անդամ

7.3. ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆՊԱՏԱԿ՝

Սովորողների մոտ ճիշտ ձևավորել հայրենիքի նկատմամբ պատկերացումները՝ սեր,հոգատարություն և հարգանք

Հայրենասիրական դաստիարակության բնագավառում ուղենշային նպատակներին հասնելու համար անհրաժեշտ են

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

• դպրոցի վարչական և ուսուցչական անձնակազմին ակտիվորեն ընդգրկել սովորողների հայրենասիրական դաստիարակության ծավալման և կատարելագործման գործընթացներում,

• պարբերաբար համակարգել, վերլուծել և գնահատել ծրագրավորված հայրենասիրական միջոցառումների կատարման արդյունավետությունը,

• դպրոցական հիմնական բոլոր միջոցառումներն իրականացնելիս ապահովել հայկական խորհրդանիշների և հայրենասիրական գաղափարների գործածում

• հայրենասիրական դաստիարակության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ներդնել աշխատանքին նոր ձևեր և մեթոդներ, ինչպիսիք են զանգվածային լրատվության միջոցները և ժամանակակից տեխնոլոգիաները՝ ֆիլմեր, սկավառակներ, էլեկտրոնային նյութեր

• դպրոցի աշակերտական խորհրդին ընդգրկել ռազմահայրենասիրական դաստիարակությանն ուղղված միջոցառումներում,

• հաճախակի անցկացնել ռազմահայրենասիրական բնույթի մրցույթներ, հանդիպումներ, զրույցներ և այլ միջոցառումներ, ինչպիսիք են՝

• «Հայոց պատմություն», «Հայ ազգ», «Հայոց լեզու», «Հայ ընտանիք» թեմաներով հանդիպումները, զրույցները, սեմինարները և այլ միջոցառումները,

• հայտնի մարդկանց, զինվորների, հայ ազատամարտիկների, հետ հանդիպումները,

• հարստացնել և համալրել հայրենասիրական դաստիարակության կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ մանկավարժական տեղեկատվական բանկը:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ՝

- Ճանաչել սեփական երկիրը ու մշակույթը
- Հարգանքով վերաբերվել այլ ազգերի մշակույթին ու ներկայացուցիչներին
- Նախապատվություն տալ հայ երաժշտությանն ու գրականությանը, ճանաչել հայազգի մշակութային, քաղաքական, գիտական գործիչներին Հայաստանում և երկրի սահմանից դուրս
- Ազգային ինքնագիտակցությունը դարձնել որպես առաջ մղող
- Տիրապետել մեր երկրի աշխարհագրական առանձնահատկություններին:

7.4 ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ, ՆԵՐԱՌԱԿԱՆ, ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Դպրոցում ձևավորվել և շարունակական զարգացնել հասարակական տրանսֆորմացիան՝ մասնակցային մեխանիզմների և ներառական ու բազմակարծիք արժեքային միջավայրը, մշակույթը, որոնք հաղիսանում են կարևորագույն նախադրյալներ դպրոցում ուսումնադաստիարակչական և վարչատնտեսական ամբողջ գործընթացը կազմակերպելու և իրականացնելու ժողովրդավարացման սկզբունքով:

ՆՊԱՏԱԿ՝

Ունենալ բազմակարծիք, ներառական, մասնակացային արժեքային միջավայր ձևավորող կրթական միջավայր

ԽՆԴԻՐՆԵՐ՝

- Որոշ մանկավարժների և ծնողների չհանդուրժողականություն բազմակարծության և մասնակցային գործընթացները որպես ժողովրդավարության գործիք
- Մանկավարժների, ծնողների ոչ լիարժեք դիրքորոշում, նրանց կողմից քաղաքացիական հասարակության դերակատարության հաստատուն ստանձնում

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

- Սովորողների ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակության ձևավորում,ամրապնդում
- Սովորողների նպաստավոր գործողություններ իրենց կրթական սոցիալականացման, իրավունքների պաշտպանության, առողջության պահպանման արդիականացմանը
- Մասնակցային և բազմակարծության գործընթաց կառավարման,ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման, հանրային քնարկման, որոշումների կայացման, ռեսուրսների բաշխման, ուսման և դաստիարակման որակի համար:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ՝

- Բոլորի համար հավասար իրավունքներ, պարտականութ-յունների կատարման պարտավորվածություն
- Հաջողութունները և թերությունները կլինեն համընդհանուր
- Յուրաքանչյուրը իրեն կզգա արժևորված, գնահատված,որն էլ կհանգեցնի ուսման որակի, կատարվող աշխատանքի և ընդհանուր առմամբ բոլորի կյանքի բարվոքության

7.5 ՀԱԼԱԾԱՆՔԻ,ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

ՆՊԱՏԱԿ՝

Դպրոցը սոցիալականացման կարևոր օղակ է, իսկ դասարանը՝խումբ,որտեղ ինտենսիվորեն ձևավորվում է յուրաքանչյուր սովորողի անհատականությունը: Երբեմն դպրում ստացած ծանր հոգեվիճակը ազդում է տվյալ սովորողի հետագա ամբողջ կյանքի վրա:Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է սովորողների և աշխատակիցների համար ստեղծել թե՛ ֆիզիկապես, թե՛ բարոյապես անվտանգ և առողջ միջավայր:

ԽՆԴԻՐՆԵՐ՝

- Անհանդուրժողականություն և՛ ուսուցիչների , և՛ աշակերտների կողմից
- Ոչ բավարար համագործակցություն՝դպրոց-աշակերտ, դպրոց- ծնող, ծնող-ծնող և աշակերտ-աշակերտ
- Ազգային փոքրամասնության,կրոնական այլ ուսմունք ունեցող, սոցանապահով սովորողների նկատմամբ կանխակալ վերաբերմունք

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

- Հալածանքի,բռնության, օտարման կանխարգելման միջոցառումների կազմակերպում և վերահսկողություն
- Բացահայտել, իրազեկել, և՛ ծնողներին, և՛ մանկավարժներին
- Բռնության,հալածանքի կամ օտարման դրսևորման ձևին համապատասխան կազմակերպել խորհրդատվություններ, քննարկումներ, հանդիպումներ
- Համագործակցել իրավապահ մարմինների հետ՝ կազմակերպելով հանդիպում-զրույցներ բռնության տեսակների վերաբերյալ և դրանց իրավական հետևանքների մասին
- Դպրոցի հոգեբանի և սոցիալական մանկավարժի ակտիվ ներգրավում թե՛ սովորողների, թե՛ մանկավարժական աշխատողների հետ տարվող աշխատանքներում:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ՝

- Բարձրանում է ուսման որակը
- Դպրոցը դառնում էգրավիչ և ապահով միջավայր յուրաքանչյուր սովորողի համար
- Ազգային փոքրամասնության,կրոնական այլ ուսմունք ունեցող, սոցանապահով ԿԱՊԿՈՒ սովորողները ապահով են և անվտանգ:
- Տեղեկացված են իրենց իրավունքներից և պարտականություններից
- Հանդուրժող են իրենց ընկերների, դասընկերների, ուսուցիչների և շրջապատի նկատմամբ

7.6 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ ԱՐԺԵՎՈՐԵԼՈՒ, ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

ՆՊԱՏԱԿ՝

- Խթանել աշխատակիցների աշխատանքը
- Բարձրացնել կատարվող աշխատանքների արդյունավետությունը
- Օժանդակել ինքնակրթությանն ուղղված նախաձեռնություններին
- Նպաստել նոր գաղափարների ներդրմանը

ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

- Անտարբերություն
- Ծանրաբեռնվածություն
- Մոտիվացիայի պակաս
- Նորի հանդեպ հետաքրքրության պակաս

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

- Ապահովել և վերահսկել դպրոցում աշխատակիցների բարեվարքության վարքականոնները
- Պարբերաբար ներկայացնել և քննարկել կատարված աշխատանքները,տալ արժանի գնահատական
- Վերլուծել արդյունքները ,գնահատել լավագույններին և պարգևատրել (դրամական խրախուսանք, շնորհակալագիր, պատվոգիր, հուշանվեր և այլն)
- Ձևավորել ինքնակրթության միջավայր(ընթերցասրահ,նախագծային աշխատանք, վերապատրաստումներ)

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ՝

- Աշխատակազմի յուրաքանչյուր աշխատակցի արժևորում և գնահատում
- Ազատ, ինքնուրույն մտածելակերպով առաջնորդվող աշխատակիցներ
- դպրոցի տարբեր ոլորտների խնդիրների քննարկման և որոշումների կայացման՝ բազմակարծություն և մասնակցություն ունեցող աշխատակիցներ
- Նախաձեռնող, նորի հանդեպ հետաքրքրություն ցուցաբերող աշխատակազմ
- Կրթության բարձր որակ

7.7 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Դպրոցի ֆինանսավորումը իրականացվում է պետական բյուջեից՝ ըստ իրականացվող հանրակրթական ծրագրերի(տարրական և հիմնական) և պայմանավորված է սովորողների թվով: Գերակշիռ ծախսերը վերաբերում են աշխատավարձեր և դրան հավասարեցված վճարումներ,էներգետիկ,կոմունալ,սննդի,գրասենյակային, կապի և ինտերնետի,համակարգչային ծառայությունների ապահովման, ջրամատակարարման և ջրահեռացման,աաշխատանքների ուղղություններին: Լաբորատոր նյութերի և սարքավորումների,գույքի ձեռքբերման նպատակով կատարվող ծախսեր գրեթե չեն լինում քանի որ աշակերտների թվով պայմանավորված ֆինանսավորման տատանումները ռիսկային գործոն են նախահաշվի այլ ծախսեր հոդվածում եղած գումարները հատկացնելու ուսումնական նպատակներով կատարվող ծախսերին.

Աղյուսակում ներկայացված են 2022թ. հոկտեմբերից մինչև դեկտեմբեր 31-ը կատարված ծախսերը։

Մատուցված ծառայությունների, կատարված աշխատանքների և մատակարարված ապրանքների անվանումը	Չափման միավորը	Փաստացի կատարված ծախսերը հազ. դրամ/01.10.2022-30.12.2022	Վճարված գումարը հազ.դրամ/ 01.10.2022-30.12.2022	Բյուջեով նախատեսված գումարը 4-րդ եռամսյակ/ հազ. դրամ/
Աշխատավարձ	դրամ	11800,0	13017,4	11800,0
Էներգետիկ ծառայություններ	դրամ	393,3	393,3	393,3
Կապի ծառայություն	դրամ	14,7	12,1	14,7
Կոմունալ	դրամ	100,0	72,2	100,0
Մնունդ	դրամ	305,6	305,6	305,6
Համակարգչային ծառայություններ	դրամ	95,0	95,0	95,0
Հատուկ նպատ. նյութեր	դրամ	134,0	134,0	134,0
Այլ ծախսեր	դրամ	120,0	120,0	120,0
Ընդամենը	դրամ	12962,6	14149,6	12962,6

Աղյուսակում ներկայացված են 2023թ. հունվարից մարտի 31-ը կատարված ծախսերը։

Մատուցված ծառայությունների, կատարված աշխատանքների և մատակարարված ապրանքների անվանումը	Չափման միավորը	Փաստացի կատարված ծախսերը հազ. դրամ/01.01.2023-31.03.2023	Վճարված գումարը հազ.դրամ/ 01.01.2023-31.03.2023	Բյուջեով նախատեսված գումարը 1-ին եռամսյակ/ հազ. դրամ/
Աշխատավարձ	դրամ	11010,0	7527,2	7527,2
Էներգետիկ ծառայություններ	դրամ	315,5	422,3	322,3
Գազ	դրամ	10440,2	1020,5	1020,5
Կապի ծառայություն	դրամ	14,4	9,2	9,2
Մննդի ծախս	դրամ	541,0	531,9	531,9
Կոմունալ	դրամ	53,5	42,2	42,2
Ընդամենը	դրամ	**22374,6**	**9553,3**	**9453,3**

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
• Դպրոցի բյուջեի արդյունավետ և նպատակային օգտագործում	• Յուրաքանչյուր տարի սովորողների թվի նվազում նախորդ տարվա համեմատ
• Ծնողական և մանկավարժական խորհուրդների համատեղ նիստի արդյունքում սոցիալապես անապահով համակարգում ընգրկված ընտանիքի երեխաներին անվճար դասագրքերի վարձավճարների փոխհատուցում պետական բյուջեից	• Ըստ սովորողների նվազման, նաև պետական բյուջեից ավելի քիչ ֆինանսավորում
• Աշխատավարձերի՝ օրենքով սահմանված կարգով վճարում և նախահաշվով նախատեսված հոդվածներով վճարումներ	• Արտաբյուջեի բացակայություն
• Ախտահանող միջոցների ձեռքբերում	
• Ուսուցիչների պարտադիր ատեստավորման համար կատարված վճարումներ	

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

ՀՀ Հանրակրթության մասին օրենքով սահմանված կառավարման նոր համակարգի համաձայն՝ դպրոցի տնօրենը ուսումնական գործընթացը արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ կարիքները տրամադրում է համակարգողին՝ պահանջվող ծախսերը գնահատելու, նախահաշիվ կազմելու և լիազոր մարմին ներկայացնելու համար։

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը ակտիվացնելու, դպրոցի կարիքները հոգալու և լրացուցիչ ֆինանսական հոսքեր ապահովելու նպատակով անհրաժեշտ է՝

- Իրականցնել լրացուցիչ կրթական ծրագրեր, ձեռնարկատիրական գործունեություն,
- Օրենսդրությամբ սահմանված կարգով դպրոցի չօգտագործվող շինությունները տալ վարձակալության,
- Մրցութային հիմունքներով լրացուցիչ ֆինանսավորում պետական բյուջեից,
- Օրենքով չարգելված ՀՀ և օտարերկրյա կազմակերպությունների նվիրատվություններ,
- Գտնել բարերարներ, իրականացնել նպատակային ծրագրեր,պետության վրայից վերցնելով որոշակի հոգսեր,
- Հնարավորության դեպքում անել խնայողություններ, որոնք կարող են ուղղվել աշխատակազմի խրախուսմանը, լավագույն աշակերտների պարգևատրմանը ինչպես նաև ֆորս-մաժորային իրավիճակներում կրթության կազմակերպման համար լրացուցիչ տեխնիկայի ձեռքներմանը։

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ՝

- ՀՀ Կառավարության 22.09.2022 թ. թիվ 1481-Ն որոշմամբ հաստատված <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգ>>-ով և ՀՀ ԿԳՄՍ նախարարի 07.12.2022 թ. <<Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցները ու նորմատիվները հաստատելու մասին>>N 79-Ն հրամանի հավելվածով սահմանվել են ֆինանսավորման նոր գործակիցներ ու նորմատիվներ, որը հնարավորություն է տալու դպրոցին՝ ըստ դասարանների թվի պետական բյուջեից ստանալու ֆինանսավորում՝ հաշվի առնելով դասարանների թվաքանակը,ընդհանուր ղեկավարման և մանկավարժական աշխատանքների, հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական,գործավարության , սպասարկման համար նախատեսվող հաստիքները,ներգետիկ և կոմունալ ծախսերը,կապի ծառայությունների ,գրասենյակային, տնտեսական ապրանքների և նյութերի համար նախատեսված ծախսերը։
- Ունենալ որակյալ ու հաստատուն կրթական միջավայր, գրավիչ, նյութատեխնիկական բազայով հագեցած դպրոց։

8.ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐ , ՄԵՂՄԱՑՆՈՂ ԿԱՄ ՉԵԶՈՔԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռիսկերը ցանկացած նպատակադրման իրականացումը խոչընդոտող հնարավոր անցանկալի գործոններն են: Դպրոցի զարգացման ծրագրում հնարավոր ռիսկերի պլանավորումը կարևոր է, քանի որ, առանց ռիսկերի հաշվառման ամենալավ մշակված դպրոցի զարգացման ծրագիրը դժվար է իրականացնել, չի արձանագրվում այն ակնկալվող արդյունքները :

№	Ռիսկերը	Ռիսկերի ազդեցությունը մեղմացնող կամ չեզքոացնող գործողություններ
1	Դպրոցի աշխատակազմի մասնագիտական պատրաստվածության մակարդակի խոչընդոտներ	Մանկավարժներին ընդգրկել վերապատրաստման դասընթացներին մասնագիտական և մանկավարժական պատրաստվածության մակարդակը բարձրացնելու նպատակով
2	Դպրոցի ֆինանսական սահմանափակ հնարավորություններ	Լրացուցիչ ֆինանսական միջոցների ձեռքբերում, հոգաբարձուների խորհրդի ձևավորում, գտնել հովանավորներ, բարերարներ
3	Դպրոցի նյութատեխնիկական բազայի ոչ բավարար հագեցվածություն	Ֆինանսական միջոցների ճիշտ պլանավորում, լրացուցիչ միջոցների հայթայթում
4	Ծնողական համայնքի կողմից դպրոցի գործունեության մասնակցության պասիվություն	Կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ ծնողների համար, որտեղ կքննարկվեն դպրոցի գործունեության վիճակը, հեռանկարային ծրագրերը, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման հարցերը
5	Դպրոցի վերանորոգման աշխատանքներ Գույքի ձեռքբերման հետ կապված ռիսկեր	Դիմել համապատասխան մարմիններին ֆինանսական միջոցներ տրամադրելու նպատակով
6	Ֆորսմաժորային իրավիճակ	Ֆորսմաժորային իրավիճակի դեպքում դպրոցում գործընթացների կազմակերպում ըստ պահանջի՝ նորմատիվներին համապատասխան:

Մանկավարժական համակազմի մասնագիտական գիտելիքներ և հմտություններ՝ մանկավարժության տեսության և պրակտիկայի արդի զարգացումների, այդ թվում՝ տեխնոլոգիաների մանկավարժության մեջ կիրառության, ներառականության ապահովման ուղղությամբ, հանրակրթության ոլորտը կարգավորող իրավական դաշտի, ուսումնական, բովանդակային, տեսության և մեթոդիկայի հիմնախնդրի, կարողությունների ապահովում:

N	Ռիսկերը	Ռիսկերի ազդեցությունը մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ
1	Նյութատեխնիկական, ուսումնամեթոդական բազայի ուսուցման բովանդակությանը ոչ համապատասխան լինելը	Նյութատեխնիկական բազայի ուսուցման բովանդակությանը համապատասխանեցնելու գործողությունները ԴԶԾ-ում նշված տարբեր միջոցառումների իրականացման միջոցով կազմակերպում
2	Մանկավարժների բացասական վերաբերմունքը դպրոցի ընդհանուր գործունեությանը	Մանկավարժների բազմակարծության, նրանց՝ դպրոցի ընդհանուր գործունեության որոշումների կայացման, կազմակերպման և իրականացման գործում մասնակցային դրսևորումների և դիրքորոշումների ապահովում և խրախուսում
3	ՈՒսուցիչների մասնագիտական, մեթոդամանկավարժական կարողությունների, շահագրգռվածության պակաս	Պետական պարտադիր ատեստավորման վերապատրաստումներից բացի Դպրոցի նախաձեռնությամբ նաև մասնագիտական, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման, ուսուցման գործընթացի օրենսդրության իմացության սեմինարների, քննարկումների և վերապատրաստումների իրականացում
4	Ինքնակրթության և ինքնազարգացման մոտիվացիայի պակաս	Ինքնակրթության և ինքնազարգացման համապատասխան միջավայրի և գործիքների տրամադրում և մոտիվացիայի տարբեր ձևերի կիրառում (պարգևատրումներ,խրախուսումներ,պատվոգրեր և այլն):
5	Ներառական կրթության ապահովման համար բազմամասնագիտական թիմի բացակայություն կամ ոչ բավարար պատրաստվածություն	ՏՄԱԿ-ի հետ շարունակական համագործակցություն, բազմամասնագիտական թիմի ձևավորում, վերապատրաստումներ, փորձի փոխանակում այլ դպրոցներ հետ

Արտադասարանական և արտադպրոցական համագործակցության խթանում, ընդլայնում:
Աշակերտական, մանկավարժական համակազմի, կառավարման և խորհրդակցական խորհուրդների, համայնքի, կրթության կառավարման լիազորված և շահառու մարմինների, բարեգործների հետ համագործակցության խթանում, ընդլայնում:

N	Ռիսկերը	Ռիսկերի ազդեցությունը մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ
1	Պասիվություն՝ ծանրաբեռնված աշխատանքի կամ այլ պատճառներով	Դպրոց-համայնք՝ որպես մեկ ամբողջական հասարակությունում ժողովրդավարության ապահովում և ամրապնդում
2	Ոչ արդյունավետ համագործակցություն	Համագործակցության շրջանակներում մասնակցային որոշումների կայացման և հանդուրժողականության բազմակարծության հետևողականության ապահովում
3	Շահագրգիռ կողմերի չներկայանալը որպես կարևոր դերակատարում ունեցող կողմեր	Աշխատանքների կազմակերպումը կողմերին հարմար ժամերին, օգտվել հեռավար կապի միջոցներից
4	Ժամանակավրեպ որոշումների, գործողությունների իրականացում	Արդյունավետ համագործության համար տվյալ ժամանակի առաջնահերթ խնդիրների ներկայացում
5	Մանկավարժական ,ծնողական, աշակերտական խորհուրդների, կառավարման խորհրդի նախաձեռնողականության պասիվություն	Համագործակցության արդյունքում կայացված որոշումների և տարբեր ծրագրերի ժամանակին իրականացում

9 . ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Նոր ՀՊՉ-ի պահանջները և հանրակրթության բովանդակության բարեփոխումները նպատակաուղղված են ի շահ սովորողի, ինչպես նաև սոցիալական, քաղաքական և մանկավարժական պահանջներին: ՀՊՉ-ի պահանջների և հանրակրթության բովանդակության իրականացման որակը կապահովի նաև ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը և հնի վերափոխումը նորով: Ներկայացված ԴԶԾ-ի նպատակների և խնդիրների լուծմանն ուղղված՝ յուրաքանչյուր գործողության իրականացման և ակնկալվող արդյունքների լիարժեք ապահովման համար պահանջվող միջոցները, նյութատեխնիկական պարագաները և տեխնոլոգիաները կիրառվել և կկիրառվեն նպատակային՝ ըստ խնդրի առաջնահերթության: Ներկայացվածի կարևորությունը ոչ միայն կիրառությունն է, այլ նաև պահպանումն է: ԴԶԾ-ի նպատակների և խնդիրների լուծման համար անհրաժեշտ են նաև մարդկային և բյուջետային ռեսուրսներ, որոնք նույնպես ապահովում են ԴԶԾ-ում ամրագրված յուրաքանչյուր գործողության իրականացումը և արդյունավետ արդյունքները: :Նախատեսվում է նաև , որ հաջորդ տարիների ընթացքում ԴԶԾ-ում կարող են կատարվել փոփոխություններ վերը նշված ռեսուրսների առկայության և գործունեության ընթացքում հաշվետվությունների վերլուծությունների արդյունքում բազմակարծության և մասնակցային որոշումների հիման վրա, ինչպես նաև ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան:

ԴԶԾ-ի գերխնդիրն է ուսման որակի բարձրացումը, որի արդյունավետ արդյունքը կստացվի՝

Մարդկային ռեսուրս	**Նյութատեխնիկական բազա**	**Մարդկային ռեսուրս և ֆինանսական ռեսուրսներ**
սովորող	Ուսումնական միջավայր՝ նյութատեխնիկական պարագաներ,տեխնոլոգիաներ	Պետական բյուջե
մանկավարժ	Լաբորատոր սարքավորումներ	Արտաբյուջետային միջոցներ
ծնող	Դիդակտիկ պարագաներ	Բարերարներ և նվիրատուներ
	Զարգացնող խաղեր և լրացուցիչ գրականություն	Շրջանավարտներ և հոգաբարձուներ
		Կառավարման մարմիններ

10. ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՆ ՈՒ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Առկա հիմնախնդիրներ	Հիմնախնդիրների լուծման գործողություններ	Պատասխանատուներ	Կատարման ժամանակացույց
Նյութատեխնիկական բազայի հարստացում	1.Ձեռք բերել նոր համակարգիչներ և պրոյեկտորներ 2.Լաբորատորիաների համար ձեռք բերել փորձերի համար անհրաժեշտ նյութեր,ստեղծել smart գրադարան:	վարչատնտեսական համակարգող	2023-2028թթ.
Հոգաբարձուների, շրջանավարտների խորհուրդների բացակայություն	Համախմբել տարբեր տարիներին դպրոցն ավարտած շրջանավարտներին և ձևավորել շրջանավարտների խորհուրդ: Բարերարներ գտնել և ձևավորել հոգաբարձուների խորհուրդ:	Տնօրեն, շրջանավարտներ, Ծնողներ, բարերարներ	2023-2025թթ.
Մանկավարժական աշխատողների գործունեության բարելավում և կատարելագործում:	1.Լինել հետևողական, որ ուսուցիչները լիարժեք կկիրառեն նոր ՀՊՉ-ի փոփոխությունները և դրանից բխող առարկայական ծրագրերը: 2. Յուրաքանչյուր տարի կազմակերպել ուսուցիչների պարտադիր ատեստավորումը ըստ ժամանակացույցի: 3.Շոշափելի ու չափելի դարձնել մ/մ-ների նպատակային դասալսումները,վեր հանած թերությունները շտկել:	Տնօրեն, տնօրենի ուս. գծով տեղակալ,տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ	2023-2028թթ. յուրաքանչյուր տարի, որպես անընդհատ, շարունակական գործընթաց: Երկու ամիսը մեկ ներկայացնել իրավիճակի մանրամասն հաշվետվություն,կատարել վերլուծություններ, տալ հստակ հրահանգներ առաջընթացն ապահովելու համար
Գրադարանը չունի համակարգչային հագեցվածություն և գեղարվեստական գրքերի քանակը372 է,որը շատ քիչ է:	Գրադարանի պայմանների բարելավում և համալրում գեղարվեստական գրքերով,գիտահանրամատչելի գրականությամբ:Բաժանորդագրվել տարբեր գիտական ամսագրերի:	Վարչատնտեսական համակարգող, տնօրեն, բարերարներ	2023-2025թթ.

Ոչ իրազեկ լինելու հետևանքով դժբախտ պատահարներ	Հաճախակի կազմակերպել կանխարգելիչ միջոցառումներ՝ ուղղված դժբախտ պատահարներից պաշտպանվելու երեխաների կարողությունների ձևավորմանը	Տնօրեն, ուսուցիչներ,զինղեկ, տնտեսվար	Յուրաքանչյուր ուսումնական տարի, տարեկան3-4 անգամ հստակ ամրագրված ժամանակացույցով:
Հակահրդեհային կրակմարիչների ժամկետներ, սանհանգույցի ոչ բարվոք վիճակ	Դպրոցում սանիտարահիգենիկ անհրաժեշտ պայմանների ապահովում (հակահրդեհային, անվտանգ սննդի, լուսային, ջերմային)	Վարչատնտեսական համակարգող, համայնքի համապատասխան բաժինների աշխատակիցներ, ուսուցիչներ, ծնողներ, սովորողներ, զինղեկ, դպրոցի տեխնիկական անձնակազմ:	Ծրագրի կատարման ամբողջ ժամանակահատվածում
Կրթության առանձնահատուկ պայմաններ ունեցող սովորողների կրթության կազմակերպման համար պատշաճ պայմանների բարելավում:	Վերանորոգել և համապատասխան ուսումնական պարագաներով վերազինել ներառական կրթության և ԿԱՊԿՈՒ ոսվորողների համար նախատեսված սենյակը:	վարչատնտեսական համակարգող	2023-2024 ուսումնական տարի
Ուսուցիչները խուսափում են տարակարգի համար դիմել և կամավոր ատեստավորվել	Աջակցել ուսուցիչներին որակավորման տարակարգ ստանալու և գիտահետազոտական աշխատանքով զբաղվելու գործում	Տնօրեն, մեթոդմիավորումներ	Ծրագրի կատարման ամբողջ ժամանակահատվածում
Ջեռուցման սեզոնին խոշոր ֆինանսական ծախսեր, կապված մարզում մոտ 6 ամիս ցուրտ լինելու և նախատեսվածից երկար ջեռուցման հետ:	Մասնակցել արևային մարտկոցներ ձեռք բերելու բարեգործական ծրագրին, որն ամեն տարի լինում է:Ծրագրի 10%-ը պետք է ֆինանսավորի դպրոցը, իսկ 90%-ը բարեգործական ընկերությունը:	Տնօրեն, վարչատնտեսական համակարգող,բարերարներ:	Ծրագիրը սկսելուց հետո այն տևում է 1-ից մինչև 1,5 տարի՝ 2023-2025թթ.

11. ԴՊՐՈՑԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ,ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատման ծրագրի գործողություններով պլանավորված և իրականացված արդյունքների համեմատման գործընթացն է: Որպես գնահատման գործիքներ պետք է ծառայեն յուրաքանչյուր գործողության առանձնահատկություններից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն ակնկալիքների կատարողականները, այլ կերպ ասած , դպրոցի զարգացման ծրագրի իրականացնող ու վերահսկող շահառուները (դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինները)՝ գործողությունների արդյունքների բավարարվածության աստիճանը: Ցուցանիշները ամբողջացնում, ամփոփում են մեծ ծավալի վիճակագրական տվյալները և տալիս են իրավիճակի ընդհանուր պատկերը: Ցուցանիշները անհրաժեշտ են նաև ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ուղղությունները բացահայտելու և գնահատելու համար:

« Հանրակրթության մասին » օրենքով նախատեսված է դպրոցի գործունեության գնահատման մեխանիզմը: Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական: Ներքին գնահատումը դպրոցի կողմից իր գործունեության վերլուծությունն է: Ներքին գնահատմանը մասնակից դարձնել վարչական և մանկավարժական աշխատողներին, սովորողներին և ծնողներին: Ուումնական հաստատության ներքին և արտաքին գնահատումն ուղղորդել սովորողին մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը:

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունն իրականացնում է դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն : Ծրագրի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը 5- ամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են:

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ՝

1.Դպրոցի խորհրդի կողմից առնվազն տարեկան երկու անգամ տվյալ ուստարվա աշխատանքային ծրագրում ընդգրկված դպրոցի զարգացման ծրագրի դրույթների կատարողականների հաշվետվությունների քննարկումը և համապատասխան գնահատականների ամրագրումը:

2. Դպրոցի Խորհրդի կողմից տնօրենի խորհրդատվական և այլ աջակցության շարունակական տրամադրումը:

3.Համայնքի և դպրոցի այլ շահառուների՝ դպրոցի զարգացման ծրագրի իրականացման աշխատանքներին կամ այդ շրջանակում կազմակերպված միջոցառումներին շարունակական ներգրավումը:

4.Դպրոցի խորհրդի մասնակցությունը տնօրենության կողմից դպրոցի զարգացման ծրագրի արդյունքների գնահատմանը:

5. Հանձն եմ առնում բարեխղճորեն կատարել տնօրենի այն լիազորությունները, որոնք սահմանված են ՀՀ Կառավարության16 փետրվարի 2023 թվականի N 216-Ն՝պաշտոնային պարտականությունների ցանկով:

Որպես դպրոցի տնօրեն՝կարող ենք իրականացնել սույն ծրագիրը դպրոցի վարչատնտեսական մասի համակարգողի ,խորհրդի՝ կոլեգիալ կառավարման մարմնի ,ծնողների, զինղեկի, մանկավարժական աշխատողների, աշակերտների, տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով, տնտեսական աշխատանքի գծով տեղակալի, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների գծով կազմակերպչի, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի, բուժքրոջ հետ:

11.1 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

	Միջոցառում/ գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Սահմանված Ժամկետում միջոցառման/ գործողության կամ մասնակի կատարման պատճառները	Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություններ	Նշումներ
1	Հաստատության զարգացման ծրագրին համապատասխան մշակել և կառավորման խորհրդի կողմից համանության արժանանալուց հետո գործածության մեջ դնել տարեկան աշխատանքային պլանը	Ըստ պլանի կատարված աշխատանքի իրականացման դեպքում հնարավոր կլինի իրավիճակի գնահատումը և հետագա աշխատանքների պլանավորումը	2023-2028թթ. յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին	Իրականացնել ներդպրոցական վերահսկողություն բոլոր նախատեսված ոլորտներում՝ իրականավնելով ՀՊՉ-ով սահմանված կրթություն	Ֆորս-մաժորային իրավիճակ	Յուրաքանչյուր տարի վերանայել և ըստ անհրաժեշտության, դուրս գալով շահառու խմբերի կարիքներից,փոփոխություն կատարել զարգացման ծրագրում	
2	Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին հաստատության խորհրդին ներկայացնել ամենամյա ծրագրի կատարողականության վերաբերյալ հաշվետվություն	Հաշվետվության հիմքն են տնօրենի տեղակալների, դասղեկների,գրադարանավարի,հաշվապահի, հոգեբանի և բոլոր մանկավարժական աշխատողների տարեկան աշխատանքային ծրագրային կատարողականները,որից դուրս գալով կկատարվի վերլուծություն և նոր շխատանքների պլանավորում	2023-2028թթ. յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին	Համաձայն ներդպրոցական վերահսկողության աշխատանքային պլանի իրականացնել վերահսկողություն, նախատեսված աշխատանքներն իրականացման համար	Ֆորս-մաժորային իրավիճակ	Յուրաքանչյուր տարի վերանայել դուրս գալով պետության կրթական քաղաքականությունից, շահառու խմբերի կարիքներից,փոփոխություն կատարել զարգացման ծրագրում ըստ անհրաժեշտության	
3	Աշխատակազմի կառավարում և մասնագիտական զարգացում	Բարոյահոգեբանական մթնոլորտի առկայություն, փոխադարձ վստահության պայմաններում ուսումնական գործընթացի իրականացում	2023-2028թթ յուրաքնչյուր ուսումնական տարվա ընթացքում	Մանկավարժական աշխատողների ընտրությունն իրականացնել օրենքով սահմանված կարգով, հաշվի առնելով թե՛ մասնագիտական,թե՛ մարդկային որակները	Ֆորս-մաժորային իրավիճակ	Զարգացման ծրագիրը պարբերաբար վերանայե լդուրս գալով պետության կրթական քաղաքականությունից, շահառու խմբերի կարիքներից,փոփոխություն կատարել զարգացման ծրագրում ըստ անհրաժեշտության	

3.1	Մանկավարժական աշխատողների թափուր տեղերի համալրում	Առարկայի ուսուցման շարունակականության ապահովում	Ուսումնական տարվա ընթացքում	Մանկավարժական աշխատողների ընտրությունն իրականացնել օրենքով սահմանված կարգով՝ թափանցիկ ու արդար	Ֆորս-մաժորային իրավիճակ	Զարգացման ծրագիրը պարբերաբար վերանայե լդուրս գալով պետության կրթական քաղաքականությունից, շահառու խմբերի կարիքներից,փոփոխություն կատարել զարգացման ծրագրում ըստ անհրաժեշտության	
3.2	Դասալսումների իրականացում	Մանկավարժների ցուցաբերվում է մեթոդական և մասնագիտական աջակցություն, կատարվում է փորձի փոխանակում	Ուսումնական տարվա ընթացքում	Դասալսումները կատարվում են տնօրենության,մեթոդական միավորումների նախագահների, մասնախմբերի ուսուցիչների կողմից, արդյունքները քննարկվում են մեթոդ միավորման,մանկավարժական խորհրդի նիստերին	Ֆորս-մաժորային իրավիճակ	Ելնելով դասալսման նպատակից,դասավանդման որակից, կատարել համապատասխան փոփոխություն ըհտ անհրաժեշտության	
3.3	Մանկավարժական աշխատողների խրախուսում	Մասնագիտական զարգացմանն ուղղված ծրագրերին մասնակցություն, ըստ գրանցած արդյունքի վարձատրության բարձրացում	Ուսումնական տարվա ընթացքում	Նախաձեռնել և իրականացնել մասնագիտական վերապատրաստումներ	Ֆորս-մաժորային իրավիճակ	Հիմք ընդունել ցուցանիշներն ու ձեռքբերումները	
3.4	Մանկավարժների վերապատրաստման ծրագրերի որակի մշտադիտարկում և հետադարձ կապի ապահովում	Մանկավարժների կողմից ուսուցման գործընթացում նոր հմտությունների, մեթոդների կիրառում	Ուսումնական տարվա ընթացքում	Օժանդակել մանկավարժներին մասնակցելու մասնագիտական վերապատրաստումներին, նորարարություններին	Ֆորս-մաժորային իրավիճակ	Ելնելով կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխություններից և կրացումներից, ապահովել դրանց ներառումը տարեկան աշխատանքային ծրագիր և հետամուտ լինել կիրառմանը	

4	Հաղորդակցություն և համայնքի հետ համագործակցություն	Կրթության որակի բարձրացման և սովորողների առաջադիմության խրախուսում, դպրոց-համայնք կապի ամրապնդում	Ուսումնական տարվա ընթացքում	Ապահովել արդյունավետ հաղորդակցություն ուսումնական գործընթացի շահառուների հետ՝ ներգրավելով համայնքին	Ֆորս-մաժորային իրավիճակ	Ելնելով հաստատության հիմնախնդիրներից և դրանց լուծման վերաբերյալ առաջարկություններից	
5	Ծնողներին ուսումնական գործընթացի մասին ժամանակին իրազեկում	Ծնող-դպրոց կապի ամրապնդում	Ուսումնական տարվա ընթացքում	Լսել ծնողների դիտարկումներն ու առաջարկները, քննարկել և ըստ հնարավորության՝ իրականացնել	Ֆորս-մաժորային իրավիճակ	Ելնելով ծնողների ողջամիտ առաջարկություններից վերանայել զարգացման ծրագիրը	